

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ИСКУССТВ

ДАВИД КЕРТМЕНДЖЯН

**АРМЯНСКАЯ АРХИТЕКТУРА В ЭПОХУ
АНТИЧНОСТИ**

(VI век до н.э. – начало IV века н.э.)

ЕРЕВАН
ИЗДАТЕЛЬСТВО «ГИТУТЮН» НАН РА
2020

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE
REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF ARTS

DAVID KERTMENJIAN

**THE ARCHITECTURE OF ANTIQUE ARMENIA
(B.C.VI c.-A.D.IV c.)**

YEREVAN
“GITUTYUN” PUBLISHING HOUSE OF THE NAS RA
2020

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԴԱՎԻԹ ՔԵՐԹՄԵՆՋՅԱՆ

**ՀԱՅԿԱԿԱՆ
ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ
ԱՆՏԻԿ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ**

(Ք.ա. 6-րդ դար - մ.թ. 4-րդ դարի սկիզբ)

ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2020

ՀՏԴ 72(479.25)(091)
ԳՄԴ 85.113(5Հ)
Ք 480

**Հրատարակվում է ՀՀ ԳԱԱ գիտահրատարակչական խորհրդի
որոշմամբ**

**Հրատարակվում է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ**

Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի կողմից
անցկացված մրցույթի արդյունքում ֆինանսավորված «18T-2A026»
ծածկագրով գիտական ծրագրի շրջանակներում:

Պատասխանատու խմբագիր՝
արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր
Աննա ԱՍԱՏՐՅԱՆ

ՔԵՐԹՄԵՆՋՅԱՆ ԴԱՎԻԹ

Ք 480 Հայկական ճարտարապետությունը անտիկ ժամանակա-
շրջանում (Ք. ա. 6-րդ դար - մ. թ. 4-րդ դարի սկիզբ)/ Պատ.
խմբ.՝ Ա. Ասատրյան.- Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ.,
2020.- 75 էջ + 1 մամուլ նկ.:

Աշխատությունն ընդգրկում է նախաքրիստոնեական Հայաստանի ան-
տիկ դարերի՝ Երվանդունիների դարաշրջանի, հայկական հելլենիզմի, հռո-
մեա-պարթևական հակամարտությունների դարերի քաղաքաշինությունն ու
ճարտարապետական նշխարները:

Օգտակար կարող է լինել պատմաճարտարապետական, ճարտարապե-
տաշինարարական բնագավառի մասնագետներին, ուսանողությանը, բոլոր
ներանց, ովքեր հետաքրքրված են հայ ճարտարապետության և մշակույթի հար-
ցերով:

ՀՏԴ 72(479.25)(091)
ԳՄԴ 85.113(5Հ)

ISBN 978-5-8080-1426-8

© Գիտություն, 2020
© Քերթմենյան Դավիթ, 2020

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Հայկական անտիկ ճարտարապետությունը, շնորհիվ աշխարհագրական դիրքի, կարևոր նշանակություն ունի համընդհանուր անտիկ ճարտարապետության մեջ: Սակայն պատմական իրադարձությունների բերումով այն նյութերով հարուստ չէ և կարիք ունի պեղումների նյութերով լրացման, ինչպես նաև գիտահետազոտականորեն վերանայման, քանզի հայկական հայտնի անտիկ քաղաքների մեծամասնությունն իրենց երբեմնի տարածքներով՝ այսօր հստակ տեղադրական տեղեկատվություն չունեն:

Ներկայացվող աշխատության նպատակը հայկական անտիկ ճարտարապետության գոյություն ունեցող նյութերի նորահայտ տեղեկություններով լրացումն է: Գիտական խնդիրներ են՝ Հայաստանի պատմական և հարակից տարածություններում եղած տեղեկատվության հետադարձ վերանայումը, որովհետև գոյություն ունեցող քաղաքական իրավիճակում, նույնիսկ շատ դեպքերում, Հայաստանի անտիկ քաղաքների տվյալները քողարկվել են կամ էլ ենթարկվել են այլ մեկնաբանությունների: Մյուս հանգամանքն այն է, որ ակնարկվող նյութը, ունենալով միջազգային փոխառնչություններ, դեռևս պետք եղած գիտական հանրայնացման գործընթացներով չի անցել: Այն կարիք ունի գեթ՝ հակիրճ, թե մանրամասն, թարգմանվելու անգլերեն լեզվով, ինչը կատարվել է սույն աշխատության մեջ:

Անտիկ Հայաստանի ճարտարապետության ներկայացվող աշխատությունը բովանդակությամբ հակիրճ է, նախատեսվում է այն հետազայում ներկայացնել պետք եղած մանրամասնություններով: Հատկապես խոսքը վերաբերում է բնագավառի գրականության տեսությանը: Փաստորեն կան թեմային վերաբերող հայ և օտար աշխատություններ, որոնք իրենց արդյունքներով չեն ուսումնասիրվել և շրջանառության մեջ չեն ներդրվել:

ԱՆՏԻԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ
(Ք.ա. VI դար – մ.թ. IV դար)

Հայկական անտիկ ճարտարապետությունը միջազգային անտիկ ճարտարապետության բաղկացուցիչ կարևոր մասն է: Այն դեռևս իր տվյալներով սուղ է, նյութերով՝ հեռանկարային:

Հին Հայաստանի ճարտարապետական մշակույթն անխզելիորեն կապված է քաղաքների կառուցապատման ու դրանց ներքին կյանքի զարգացման հետ: Քաղաքները ոչ միայն ռազմավարչական, այլև միաժամանակ կրոնական, առևտրաարհեստավորական և մշակութային կենտրոններ էին, որ արտահայտվել է դրանց աշխարհագրական դիրքով: Գոյություն ունեցող քարտեզները, ըստ ժամանակաշրջանների տարբեր բովանդակություն ունենալով, քարտեզագրական տվյալով ժամանակի ընթացքում աղավաղվել են: Այդ առումով աշխատությունում նպատակահարմար է գտնվել հենվել Տիգրան Բ թագավորի ժամանակաշրջանի քարտեզի վրա՝ դրանում արտահայտելով հետուրարտական և նախաքրիստոնեական բնակավայրերը միաժամանակ (նկ. 1):

Բնականաբար, տվյալ քարտեզի առանցքը կազմում է «Արքունական պողոտան», որ իրար է միացնում Հայաստանով անցնող Հյուսիսային և Հարավային միջազգային առևտրի մայրուղիները: Մեծ Հայքի տարածքով ներկայացվող քարտեզում դեռևս ընդգծված մնում են ուրարտական՝ վարչատնտեսական կենտրոն քաղաքների, պաշտամունքային բնակավայրերի և ամրաշինական ցանցի տեղաբաշխվածության սկզբունքները:

Փաստորեն անտիկ Հայաստանի քաղաքաշինական ժառանգությունը որպես վաղ հայկական դարաշրջան հաջորդում է ուրարտական ճարտարապետությանը և վերակազմավորվում է Երվանդյան արքայատոհմի ժամանակաշրջանում: Այնուհետև ժառանգորդաբար շարունակվում է հելլենիստական, ինչպես նաև հռոմեա-պարթևական հակամարտությունների դարերում:

Ա. ԵՐՎԱՆԴՈՒՆԻՒՆԵՐԻ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Երվանդունիների դարաշրջանի հուշարձաններից առավել հայտնի են Էրեբունիի Արին Բերդում կառուցված մի քանի շինություններ, որքան էլ Էրեբունին չի արտահայտվել ժամանակաշրջանի քարտեզում (նկ. 2): Արին Բերդի տվյալ ժամանակների շինություններից հատկապես ուշադրության են արժանի սյունազարդ դահլիճը (ապադանան), որ վերափոխվել է ուրարտական Խալդի աստծո տաճարից և ծառայել պաշտոնական ընդունելությունների և հանդիսությունների համար: Շենքը 29 մ x 33 մ չափերով, 5 x 6-սյունանի սրահ է, սյուներն ու առաստաղը փայտակերտ են: Նշենք, որ, ի տարբերություն պարսկական օրինակների, ապադանային կից կան երկու դահլիճներ և աստիճանավոր աշտարակ¹: Արին Բերդի տարածքից հայտնի մյուս շենքերը 2 Հրո տաճարներն են: Փոքր տաճարը 18 մ x 12 մ չափերի նախասրահին հաջորդող ուղղանկյուն դահլիճ է: Ծածկը փայտաշեն է, պատերը հարթ են, ներսում համապատասխան կրակի խորշով: Մեծ տաճարը 19 մ x 19 մ չափերով կրկնում է փոքր տաճարի հորինվածքը²: Երկու շենքերն էլ իրենց զուգահեռներն ունեն և՛ Հայաստանում, օրինակ՝ Հին Բայազետում, և՛ Հայաստանից դուրս, ինչպես օրինակ՝ Պերսեպոլսում, սիրիական Հաուրանում, Միջագետքի տարածքից՝ Հատրայում, Միջին Ասիայում և այլուր³: Ավելացնենք, որ նշված շինությունները կա-

¹ Հայկական ճարտարապետության պատմություն վեց հատորով, հատոր առաջին, հատորի պատասխանատու խմբագիր՝ **Տիրացյան Գ.**, Երևան, 1996, էջ 203-205:

² Անդ, էջ 206-208:

³ Հմմտ. **Beadouin E.E & Pope A.U.**, City plans, A survey of persian art, reprinted in Japan by Sopa Ashiya, 1981, pp. 1391-1410.

ռուցողական առումով ունեն պատային շարվածքի ընդգծված ուրարտական առանձնահատկություններ:

ԱՆԻ-ԿԱՄԱԽ (Քեմահ, նկ. 3). եղել է պատմական Հայաստանի հյուսիսարևմտյան տարածքների՝ Երբեմնի Հայասա-Ազգիի մայրաքաղաքը Ք.ա. XV-XIII դդ.: Ք.ա. IV դարի վերջերից այն դառնում է Փոքր Հայքի ինքնուրույն թագավորության կենտրոնը և Արամազդի ու Անահիտի գլխավոր պաշտամունքային վայրը⁴: Կարևոր ենք համարում նշել, որ վաղ քրիստոնեության շրջանում քաղաքի մեծիանն ավերվել է: 364 թ.-ին պարսից Շապուհ II արքան գրավել և ավերել է բերդը՝ Արտաշիսյանների և Արշակունիների նեկրոպոլիսից հափշտակելով հայոց թագավորների ոսկորները (որոնցում պետք է լինեին նաև Տրդատ III-ի նշխարքները)՝ փորձելով այն տեղափոխել Պարսկաստան⁵: Արդյունքում հայկական զորքերը, կասեցնելով պարսիկներին, վերցնում են նշխարքները, և դրանք վերջին հաշվով հանգրվանում են Ձորափում պահպանված Արշակունիների դամբարանում: Քաղաքի մասին հիշատակվում է նաև բյուզանդա-արաբական ընդհարումների հետ կապված (7-9-րդ դարեր), այնուհետև Մանազկերտի ճակատամարտով 1071 թ. անցնում է սելջուկներին: Բնակավայրը մինչև Հայոց ցեղասպանությունը մնում է հայկական թեմական կենտրոն: Ամրոցը, որ մինչև օրս գոյատևում է համանուն փոքր բնակավայրի հարակցությամբ, գտնվում է Երզնկա (Էրզինջան) քաղաքից հարավ-արևմուտք: Այն ունի երեք դուռ և մի սանդղաձև ելք: Ներսում մնացել են բազմաթիվ շինություններ, այդ թվում նաև՝ վերևում նշված նեկրոպոլ (նկ. 3.1), եկեղեցիների հետքեր և այլն: Ուշագրավ փաստ է, որ Բագրատունյաց Անի քաղաքը կրում է Անիասա կամ Անի-

⁴ Տե՛ս **Կոստանյան Կ.**, Հայոց հեթանոսական կրոնը, Վաղարշապատ, 1879, էջ 18:

⁵ Տե՛ս Հայկական Վիկիպեդիայի «Անի-Կամախ» տեղանունը. [Hy.wikipedia/wiki/Անի_Կամախ](http://hy.wikipedia/wiki/Անի_Կամախ):

Կամախ անունը⁶: Մյուս հանգամանքն այն է, որ տարածքի Երվանդյան հուշարձաններին վերաբերող տեղեկությունները պետք եղած արտահայտությունը չեն գտել, որքան էլ տարածքի վերաբերյալ եղել են հարցին նվիրված մի քանի միջազգային գիտաժողովներ:

ՎԱՆ-ՏՈՍՊ (նկ. 4): Հիշատակվում է Շապուհ II-ի ավերած Հին Հայաստանի կարևորագույն քաղաքների շարքում⁷: Կարծիք կա, որ Մովսես Խորենացու՝ Վան-Տոսպի նկարագրությունը ոչ միայն վերաբերում է ուրարտական Տուշպային, այլ նաև դրան հաջորդող դարերին⁸: Փաստորեն վերջին շրջանում քաղաքի մերձակայքում հայտնաբերվել են նաև անտիկ դարաշրջանի նյութեր (նկ. 4.1):

ԱՐՄԱՎԻՐ (նկ. 5): Հին Հայաստանի բնակավայրերից առաջինն է, որ հիշատակվում է որպես Երվանդունիների Արարատյան թագավորության մայրաքաղաք (Ք ա. 331-160 թթ.): Մինչև այդ Արմավիրը, Ք.ա. 2-րդ հազարամյակի 21-20-րդ դարերում հիմնադրվելով Երասխաձորում, Ք.ա. 16-8-րդ դարերում Դաշտային Էթիունի թագավորության Ազա(նի) անունով կենտրոնն էր: Ք.ա. 8-5-րդ դարերում Արմավիրը ընդգրկվել է Վանի թագավորության կազմում՝ կրելով Արգիշտիխինիլի անունը, որ Ք.ա. 4-1-ին դարերում դառնում է Երվանդունիների հայոց Արմավիր մայրաքաղաքը: Մովսես Խորենացին հայտնում է, որ Արմավիրը գտնվում էր բլրի վրա՝ Երասխ (Արաքս) գետի ափին: Այն գտնվել է մի կողմից այժմյան Արմավիր ու Հայկավան, մյուս կողմից՝ Նոր Արմավիր գյուղերի միջև: Առաջին երկու գյուղերը քաղաքատեղին սահմանափակում են հարավարևելյան, իսկ երրորդը՝

⁶ Անդ:

⁷ Տե՛ս **Փաւստոս Բյուզանդացի**, Պատմութիւն հայոց, ի չորս դպրութիւնս, Վենետիկ, Ս. Ղազար, 1832, չորրորդ դպրութիւն, գլ. ԾԵ, էջ 172:

⁸ Տե՛ս **Հարությունյան Վ.**, Հայկական ճարտարապետության պատմություն, Երևան, 1992, էջ 210, 211:

հյուսիսային կողմերից⁹: Քաղաքատեղիի ճշգրիտ սահմանները պարզված չեն: Հյուսիսից հարավ ուղղությամբ ընկած ընդարձակ տարածքում ձգվում են մի քանի ժայռաբլուրներ, որոնք կարծես շղթա են կազմում, իսկ նրանցից ամենամեծն ու բարձրը գտնվում է բլրաշղթայի հարավարևելյան կողմում: Համարյա բոլոր ժայռաբլուրների վրա, սկսած հյուսիսայինից, որը կոչվում է Սուրբ Դավիթ, հետագոտողները նկատել են հին կառուցվածքներ, այդ թվում՝ աշտարակավոր պարիսպների մնացորդներ¹⁰: Դաշտավայրի կողմից քաղաքը պաշտպանված էր խոր խրամով: Առաջին հերթին հզոր միջնաբերդով կառուցապատվել է Արմավիրի արևելյան միջնաբերդը, հետո՝ արևմտյանը, և երկուսն իրար հետ կապվել են Դավթի բլրաշարքի վրայով ձգվող գլխավոր փողոցով, որի երկարությունը հասնում է 5 կմ-ի: Քաղաքի անկումից հետո հեղինիստական Արմավիր մայրաքաղաքը հիմնականում ծավալվել է արևելյան բլրի շուրջը: Բնականաբար 5 կմ երկարությամբ պողոտա չէր կարող լինել: Դրանք երկու հարակից ագլոմերացիաներ են, որ հետագայում դրանց միջև եղած ուրարտական կառույցների վրա ձևավորվել է հեղինիստական քաղաքը: Արևելյան ամրոցը ակրոպոլիս է՝ իր մեհյաններով: Այստեղ հյուսիսարևելյան կողմում եղած սոսյաց անտառը հարակցել է դեպի արևելք և հյուսիս զարգացող մեծ ագարակը: Փաստորեն Արմավիրը վարչաարհեստավորական կենտ-

⁹ **Մովսես Խորենացի**, Հայոց պատմություն, թարգմանություն, ներածություն և ծանոթագրություններ դոկտոր Ստ. Մալխասյանի, «Հայպետհրատ», Երևան 1940, էջ 26:

¹⁰ Արմավիրի մասին տե՛ս **Տեր-Ավետիսյան Ս.**, Археологическое обследование городища и крепости «Древний Армавир», «Научный сборник», Ереван 1941, էջ 51-64. **Առաքելյան Բ.**, О некоторых результатах археологического изучения древнего Армавира, «Պատմա-բանասիրական հանդես», 1969, № 4, էջ 157-174: **Հարությունյան Վ.**, Հայկական քաղաքաշինության և ճարտարապետության տեսության ու պատմության հիմնախնդիրներ, էջ 24-30: **Տիրացյան Գ.**, Культура древней Армении, VI в. до н. э.- III в. н. э. (по археологическим данным), Երևան, 1988, 200 էջ: Նույնի՝ Արմավիրի պեղումները (առաջին պեղումների առթիվ), ՊԲՀ, 1980, Թ-2, էջ 23-38 և այլն:

րոն է, որի ագորան, գտնվելով հյուսիս-արևմուտք զարգացող պողոտայի ուղղությամբ, արևմտյան ամրոցի փեշերին ձևավորել է ագորայի հասարակական և պաշտամունքային գոտին: Սա շատ է հիշեցնում հունահելլենիստական սրբատեղիները և՛ բովանդակությամբ, և՛ տեղաբաշխմամբ (տե՛ս Դելֆիի սրբատեղին, Պերգամոսի միջնաբերդը և այլն):

Արմավիրն աչքի է ընկնում քաղաքաշինական ինքնատիպությամբ. ուրարտական ավանդույթներն այստեղ զուգակցվում են հելլենիստականի հետ: Մովսես Խորենացին է վկայում Արմավիրում կառուցված հեթանոսական տաճարների մասին¹¹: Նույնը պետք է ասել սոսյալ անտառի մասին, որտեղ գուշակություններ էին անում ծառերի տերևների սոսափյունով: Ենթադրվում է, որ Արմավիրն անտիկ հատկանիշներով կազմավորվել է Ք.ա. IV-III դդ., հավանաբար՝ 330-ական թվերին՝ Գավգամելայի ճակատամարտից հետո, երբ Ալեքսանդր Մակեդոնացին պարտության մատնեց պարսիկներին, և Երվանդ-Օրոնտասը իրեն Աքեմենյան Պարսկաստանից անկախ հայտարարեց ու մայրաքաղաքը Վանից տեղափոխեց Արմավիր: Այստեղ Աքեմենյանների օրոք տեղի էր ունեցել Արմավիր բլրի շրջապատում գտնվող բնակավայրերի համախմբումը¹²:

Արմավիրը որպես հելլենիստական քաղաք բնութագրելու համար հիմք են հանդիսացել տաճարի վրա փորագրված հունարեն արձանագրությունները, որոնցից մեկը Արմավիրի մեծ բլրի հարավային ստորոտում հայտնաբերվել է 1911-ին, իսկ մյուսը՝ 1927-ին¹³: Վերջինը անտեղակության հետևանքով ոչընչացվել է, առկա է միայն լուսանկարը, որը, հավանաբար, քա-

¹¹ Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, էջ 75, 79, 110:

¹² Հայկական ճարտարապետության պատմություն վեց հատորով, հատոր առաջին, էջ 211:

¹³ Տե՛ս Հարությունյան Վ., Հայկական քաղաքաշինության և ճարտարապետության տեսության ու պատմության հիմնախնդիրներ, հոդվածների ժողովածու, կազմեց և հրատարակության նախապատրաստեց՝ Քերթմենչյան Դ., Երևան, 2004, էջ 26, 27:

ղաքի ամրոցի հատակագիծն էր, ինչպես ընդունված էր հելլենիստական քաղաքներում¹⁴:

Արմավիրում կյանքը տևական չի եղել: Ինչպես պատմում է Մովսես Խորենացին, դեռևս Երվանդունիների օրոք, Արաքս գետի հունի փոփոխման պատճառով, ստիպված են եղել Արմավիրից ոչ հեռու Ք.ա. 3-րդ դարում հիմնադրել մի նոր քաղաք՝ Երվանդաշատ անունով¹⁵: Արմավիրի միջնաբերդը նույնպես արևելյան բլրի վրա է: Այն բերդշենատիպ է: Կենտրոնական մասում բակն է, որի արևելյան և արևմտյան կողմերում եղել են պալատն ու մեհենական համալիրը: Մինչդեռ քաղաքային թաղամասերը ձգվում էին բլրից դեպի արևմուտք¹⁶:

Հայաստանում Արմավիրը վաղ հելլենիստական դարաշրջանի արվեստի մեծ կենտրոններից մեկն էր իր հայտնի ագորայով հանդերձ: Դժբախտաբար Սարդարապատի բերդի կառուցման կապակցությամբ, սկսած 1719 թ.-ից քաղաքի հին կառույցները պարսիկ տիրակալների նախաձեռնությամբ օգտագործվել են որպես քարհանք ռազմական ծրագրերի համար: Փաստորեն Արմավիրի թատրոնը գտնվել է արևմտյան բերդի հարավային լանջին¹⁷: Թատրոնի գլխամասում ուղիղ տեղակայված էին Անահիտի տաճարը և դիցամոր արձանը: Տաճարի ճակատային մասում են տեղակայված եղել հնագետների գտած հունարեն արձանագրությունները: Թատերական համալիրի հետ եղել են Արտավազդ Բ արքայի ապարանքն ու երկու գրադարանները, ինչպես նաև Վաղարշակ թագավորի հիմնադրած երբեմնի դիցարանը, որ քանդվել էր Հայաստանում քրիստոնեության ընդունման տարիներին: Արմավիրի դիցարանում համադրվել են համայն հելլենիստական և հայկական աստված-

¹⁴ Տե՛ս **Тревєр К.В.** Очерки по истории культуры Древней Армении, М.-Л., 1953, с. 115-116.

¹⁵ Տե՛ս **Մովսես Խորենացի**, էջ 109:

¹⁶ Հայկական ճարտարապետության պատմություն վեց հատորով, հատոր առաջին, էջ 210-213:

¹⁷ **Тревєр К.В.** указ. соч., стр. 148-156.

ները: Դրանցից հատկապես հայտնի են Արեգակի, Լուսնի, Նախնյաց հիշատակի աստվածները: Ինչ վերաբերում է քաղաքի կառուցապատմանը, այն եղել է դարավանդաձև, որտեղ ուրարտական վերօգտագործված շենքերը բազմաթիվ են¹⁸: «Հելլենիստական դարաշրջանում ամրոցի արևմտյան մասում ծնունդ է առել մի փոքր թաղամաս... Ուրարտական շենքերի փլատակների վրա առաջացել են հելլենիստական ժամանակաշրջանի կացարաններ... Նոր Արմավիրի բլրաշարքի արևելյան մասում բացված համալիրի մնացորդները վերաբերում են հելլենիստական դարաշրջանի ագարակին: Այն բաղկացած է բնակելի ու տնտեսական բաժանմունքներից՝ խմբված ներքին բակի շուրջը: Բնակելի սենյակները ջեռուցվել են բուխարիների օգնությամբ, որոնք ունեն իրենց հելլենիստական զուգահեռները: Տնտեսական մասն աչքի է ընկնում հնձաններով... Արմավիրի հելլենիստական դարաշրջանի բնակելի օրինակները միջնաբերդի արևմտյան թաղամասում, ագարակում կարևոր են իրենց հելլենիստական առանձնահատկություններով»¹⁹: Արմավիրում մեծ և հարուստ առանձնատներ են եղել: Երկու ամրոցների միջև ձգվող տարածքում պահպանված 9 մենատներից երկրորդ համարով ներկայացողը 80 քմ մակերեսով բակավոր հորինվածք ունի: Երրորդ տան կենտրոնական մասում երդիկ կա: Իններորդը միջանցքային է: Բերդաքաղաքի կառուցապատումն ընդհանուր առմամբ դարավանդաձև է: Ընդ որում նշելու հանգամանք է, որ ճարտարապետական առումով երկու միջնաբերդերի պալատների հատակագծային հորինվածքը հստակ է: Դրանք ուրարտական և հելլենիստական համադրված առանձնահատկություններ ունեն: Հորինվածքի կենտրոնում պաշտոնական ընդունելությունների բակն է, որի երկու կողմից տնտեսական և պաշտամունքային գոտիներն են: Տվյալ առանձնա-

¹⁸ Հայկական ճարտարապետության պատմություն վեց հատորով, հատոր առաջին, էջ 214, 215:

¹⁹ Անդ, էջ 215:

հատկությունը բնութագրական է նաև Արմավիրի հեղինիստական դարաշրջանի կառուցապատման համար:

Բ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵԼԼԵՆԻՋՍԻ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Հեղինիստական Հայաստանի քաղաքների մասին փաստացի ամբողջական նյութերը նույնպես սուղ են: Այսօր դրանց մի մասն է Հայաստանի քաղաքական սահմաններից ներս, մյուսները գտնվում են երկրի հարևան տարածքներում:

Ըստ պատմական աղբյուրների՝ Հին Հայաստանում կային ստորև ուսումնասիրվող 20-ից ավելի մեծ և փոքր քաղաքներ, որոնք գտնվել են Հեղինիստական աշխարհի տարանցիկ առևտրի ճանապարհների շարունակությունը կազմող «Արքունական մայրուղու» վրա (նկ. 6): Միջազգային հեղինիստական ճարտարապետության ուշագրավ օրինակներ են հետևյալները:

ԱՐՇԱՄԱՇԱՏ (նկ. 7): Հիմնադրվել է Ք.ա. III դարի կեսերին և եղել է Ծոփքի Արշամ թագավորի աթոռանիստը: Այն գտնվել է Դարեհի՝ արևելքն արևմուտքին կապող «Արքայական ճանապարհի» վրա: Քաղաքը հիմնադրությամբ Հայաստանի առաջին հեղինիստական քաղաքներից է: Ք. ա. II-I դդ. եղել է առևտրի ու արհեստագործության հայտնի կենտրոն: Ք. ա. I դ. ավերվել է, ամայացել: Ըստ Հ.Կիպերտի քարտեզի՝ Արշամաշատը տեղակայված է Ծոփք լճից հյուսիս-արևելք²⁰, Բալուից Խարբերդ տանող ճանապարհին՝ Արածանիի ձախ ափին²¹: Իրականում Արշամաշատը - Արկաթիակերտը - Տիգրանակերտը - Ձյունկերտը - Արզանը - Փինիկը - Ամիդը - Եդեսիան - Աշմուշատը - Արսամեան և այլն, Մեծ Հայքին հարակից երկրների (Կապադովկիա, Կիլիկիա, Սելևկիա ու Մարաստան) սահմանա-

²⁰ Kiepert H. Über die Lage der Armenischen Hauptstadt Tigranokerta, Berlin, 1873, տե՛ս գրքին կից քարտեզը:

²¹ Հակոբյան Թ., Պատմական Հայաստանի քաղաքները, Երևան, 1987, էջ 72, 73:

գլուխներին տեղաբաշխված պաշտպանական համակարգ է, որ ուրարտական ժառանգորդական բնութագիր ունի: Այն նույն՝ ուրարտական՝ էգալ-ուրու-ամրոց տարածական համակարգով է, որտեղ էգալը Տիգրանակերտ մայրաքաղաքն է, իսկ ուրուները թվարկված քաղաքներն են իրենց հարակից ամրոցներով, որոնց միջև կան բազմաթիվ ձորապահակ ամրոցներ: Այդ ուրուների թվին են պատկանում նաև Արշամաշատն ու Կարկաթակերտը՝ առանց շփոթելու դրանք Աշմուշատի և Արշամեայի հետ: Այս վայրերը բոլորն էլ իրենց մնացորդներով դեռևս տարածքում գոյատևում են (նկ. 7.1), որոշ դեպքերում նույնիսկ ենթարկվել են ամրակայման միջոցառումների: Ինչ վերաբերում է Արշամաշատին, այն Խարբերդի տարածքում է և ջրամույն է Քաբանի ջրամբարի կառուցման կապակցությամբ²²:

ԱՐԿԱԹԻԱԿԵՐՏ (ԿԱՐԿԱԹԻԱԿԵՐՏ): Նույնպես Ծոփքի աթոռանիստ կենտրոններից էր՝ Ք.ա. 230 թ.: Տեղանքը գտնվում է Արշամաշատից հարավ և արևմուտք՝ Տիգրիսի ափին²³: Համաձայն նոր տեղեկությունների՝ տեղում պահպանվել են բազմաթիվ ավերակներ, որոնք և՛ գետափին են, և՛ գետի մեջ կղզիացած մասերում: Մեծամասշտաբ կառույցներն այսօր անճանաչելի են, դրանց երեսապատող քարերն ամբողջապես պոկված են: Երևում է, որ տեղում պեղումներ չեն կատարվել: Վայրը սահմանվում է Տիգրանակերտ մայրաքաղաքի տարածքում՝ 50 կմ հեռավորության վրա, իմա՝ հյուսիս-արևմուտք:

ԵՐՎԱՆԴԱՇԱՏ (նկ. 8): Հիմնադրվել է Ք.ա. III դ. վերջին Արարատյան դաշտում՝ պատմական Արշարունիք գավառի սահմաններում: Կառուցապատվել է Արմավիր քաղաքի շուրջը Ախուրյան գետի հունի փոփոխման և բնակվելու համար պիտա-

²² Ancient Armenian cities as recorded by the Greeks and Romans Link: <https://www.peopleofar.com/2014/01/31/ancient-armenian-cities-as-recorded-by-the-greeks-and-romans/>.

²³ Բնակավայրի պատմության մասին ավելի մանրամասն տե՛ս **Հակոբյան Թ.**, Հայաստանի պատմական քաղաքները, Երևան, 1987, էջ 160, 161:

նելիությունը կորցնելու հետևանքով: Ներկայիս Երվանդաշատը նշանակվում է նույնանուն բնակավայրի կողքը եղած «Խարաբայի» (ավերակների) տարածքում: Խնդիրն այն է, որ Մ.Խորենացու հաղորդման և տեղում եղած հնությունների միջև բովանդակային տարբերություն կա: Փաստորեն Արմավիր-Երվանդաշատ-Երվանդակերտ բնակավայրերը համեմատաբար մոտ են իրար, և տեղեկություններում հավանական է շփոթի առկայությունը: Հատկապես սա վերաբերում է Երվանդաշատ և Երվանդակերտ քաղաքներին: Առաջինը գտնվում է Արաքսի հարավային ափին, իսկ երկրորդը՝ հյուսիսային: Ներկայիս մի ամրոց գտնվում է ժայռոտ լեռան արևելյան գագաթին, իսկ մի այլ ամրոց կամ որսորդական ապարանք՝ Արաքսի հարավային կողմում: Խնդիրն ավելի բարդանում է այն հանգամանքով, որ տեղում գոյություն ունեն ուշ անտիկ, վաղ քրիստոնեական և զարգացած միջնադարյան հետքեր, որոնք ծավալվում են գետի երկու կողմերում: Վերջին տասնամյակների պեղումների հիման վրա ուշագրավ է այն եզրակացությունը, ըստ որի՝ «2005–2014 թթ. ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի հնագիտական արշավախմբի կողմից աշխատանքներ են իրականացվել ժամանակակից Երվանդաշատ գյուղի մոտակայքում՝ Արաքս գետի ձախ ափին խոյացող բլրի վրա: Պեղվող հուշարձանը հիմնադրվել է մ. թ. ա. III դ. և Երվանդունիների հարստության վերջին ներկայացուցիչ Երվանդ թագավորի որսորդական պալատն է, որը գտնվում է... «Անտառ Ծննդոցի» տարածքում: Արտաշես I-ի ժամանակ պալատը վերածվել է ամրոցի, իսկ մ. թ. ա. I դ. սկզբին՝ բնակելի համալիրի: Հուշարձանի ուսումնասիրությամբ բացահայտվեց, որ Երվանդաշատը տիպաբանորեն նույնանում է ավելի հին՝ աքեմենյան կենտրոնների, այլ ոչ թե հելլենիստական տիպի քաղաքների հետ»²⁴:

²⁴ Тер-Мартirosов Ф., Ервандашат, «Անտառ ծննդոց» հողվածների ժողովածու՝ նվիրված Ֆելիքս Տեր-Մարտիրոսովի հիշատակին, Երևան, 2015, էջ 33–54:

Պատմահայր Խորենացու հաղորդմամբ Երվանդը քաղաքն ու միջնաբերդը կառուցել է միակտոր ապառաժ բլրի վրա՝ Ախուրյան և Արաքս գետերի միախառնման հանգույցում։ Որպես քաղաքաշինական միջոցառումներ՝ սկզբում բերդն ամրացվել է բարձր պարիսպներով, որոնց ներքին մասում ժայռերը կտրելով գոգաձևությամբ իջեցվել է մինչև բլրածև տեղանքի հատակը՝ գետի մակերևույթին հավասար, այնպես որ գետից ջրերը դրսից (բլրի ստորոտից) հոսեն դեպի ներքին տարածք՝ խմելու ջուր մատակարարելու համար։ Պարիսպներն ամրակայվել են շուրջանակի դասավորված աշտարակներով, որոնց մեջ տեղադրվել են պղնձե դռներ և երկաթե սանդուղքներ, դրանց վրա էլ՝ գաղտնի որոգայթներ, որպեսզի դավողները բռնվեն։ Մովսես Խորենացու վկայությամբ. «Պարսպե զբլուրն, և ի ներքսագոյն քան զպարիսպն ընդ բազում տեղիս կտրեալ զքարինսն մինչև ի յատակս բլրոյն հաւասար գետոյն, մինչև դիմել ջուրց գետոյն ի փորուածն, յըմպելեաց պատրաստութիւն։ Չմիջնաբերդն ամրացուցանէր բարձր պարսպօք, և դրունս պղնձիս կանգնէր ի միջոցի պարսպին, և ելանելիս երկաթիս ի ներքուստ ի վեր մինչև ցրտունն. և ի նմա որոգայթս իմն ծածուկս ընդ մէջ աստիճանացն, որպէս զի ըմբռնեսցի՝ եթէ ոք գաղտ ելանելով դաւել կամիցի զարքայն»²⁵։

Քաղաքի կառուցապատումը երկմաս հորինվածքով է։ Փաստորեն գետից մյուս կողմ ծավալված բերդաքաղաքն ամրոցի հետ կապվել է գետի վրա ձգվող երկաթյա շարժական կամուրջներով։ Նշելու հանգամանք է, որ Երվանդաշատի կողքին միաժամանակ կառուցվել է պաշտամունքային փոքր քաղաք, որտեղ տեղափոխվել է քաղաքի դիցարանը և անվանվել Բագարան²⁶։

Քանի որ Երվանդաշատը գտնվում է ներկայիս Ախուրյան գետով բաժանված հայ-թուրքական սահմանային գոտում,

²⁵ Մովսես Խորենացի, նշվ. աշխ., էջ 109, 110։

²⁶ Անդ, էջ 110։

պեղումները պետք եղած ընթացակարգը չունեն: Բայց ինչպես վկայում են Թ.Թորամանյանի կատարած այցելության նկարագրությունները, կառուցապատման իրականացվել է մոնումենտալ հաստահեղույս պատերով, որոնք ունեցել են երկաթյա կապեր: Սա վկայում է այն մասին, որ Երվանդաշատն ունեցել է մեծ չափսի շինություններ²⁷: Քաղաքի կառուցապատման զուգահեռներ կարելի է համարել Երուսաղեմի մերձակա Հերոդիում պալատ-քաղաքը (Ք.ա. 40 թ.)²⁸ և պարսկական անտիկ ժամանակներից դեպի Սասանյան ժամանակաշրջան և միջնադարյան դարեր ժառանգված Թախթ-է-Սոլեյմանը²⁹:

Այժմ հստակեցնելու համար ներկայացված նկարագրությունները, Գուգլ մեպի և տեղում կատարված նկարահանումների համեմատական ուսումնասիրությունները գրեթե անհնարին են և քաղաքի կառուցապատման հստակեցումը թողնվում է պայմանական:

ԵՐՎԱՆԴԱԿԵՐՏ: Կառուցապատվել է Ք.ա. III-II դդ. սահմանագլխին Երվանդունի վերջին թագավորի՝ Երվանդ Դ-ի կողմից: Եղել է թագավորական դաստակերտ և բերդաքաղաք Մեծ Հայքի Այրարատ աշխարհի Արշարունիք գավառում՝ Արաքսի և Ախուրյանի գետախառնուրդի մոտ՝ Արաքսի աջ ափին՝ բլրի վրա՝ Երվանդաշատ քաղաքի դիմաց: Երվանդակերտը ի սկզբնեցիկ եղել է բերդ, սակայն բերդի շուրջը հետագայում բարեկարգ բնակավայր է ձևավորվել, որն էլ վերածվել է բերդաքաղաքի, ապա և արվարձաններ ունեցող քաղաքի:

ԱՐՏԱՇԱՏ (նկ. 9): Հիմնադրման մասին տեղեկություններ պահպանվել են ինչպես օտար (Պլուտարքոս, Ստրաբոն), այն-

²⁷ **Թորամանյան Թ.**, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, Երևան, 1942, էջ 282-286:

²⁸ **Netzer E.**, The Architecture of Herod, the Great Builder, Baker Academics, Grand Rapids, Michigan, p. 449.

²⁹ **Hans Henning Von Der Osten und Rudolf Naumann, Tacht-i-Suleman**, Vorläufigen Bericht über die Ausgrabungen 1959. Տե՛ս քաղաքի ներդիր հատակագիծը:

պես էլ հայկական (Մ. Խորենացի) աղբյուրներում³⁰։ Այն գտնվում է Երասխ և Մեծամոր գետերի ջրերով պաշտպանված թերակղզու վրա։ Բացի բնական պայմաններով պաշտպանվածությունից, Արտաշատն ուներ հզոր պարիսպներ, որոնք Պլուտարքոսին հիմք են տվել Արտաշատն անվանելու «Հայկական Կարթագեն»՝ նկատի ունենալով նաև այն, որ քաղաքի պաշտպանական համակարգի խորհրդատուն եղել է Հաննիբալը³¹։ Արտաշատը ծավալվել է հաջորդական 9 բլուրների վրա, որոնցից մեկը Խոր Վիրապն էր։ Աշխարհագրականորեն Արտաշատը գտնվում էր Արարատյան դաշտի կենտրոնում, որը վաղնջական ժամանակներից հայտնի էր առատ բերքատվությամբ։ Լինելով քարավանային առևտրի կարևոր հանգույց՝ Արքունական (Մետաքսի) պողոտայով կապված էր միջազգային քարավանային ճանապարհների հետ։ Պատմական աղբյուրներում հիշատակվում են քաղաքի միայն երեք դարպասները։ Դրանցից մեկը գտնվում էր քաղաքի հարավարևմտյան մասում՝ Արաքս գետի վրա ձգված Տափերական կամրջի մոտ։ Այդ դարպասից էր սկսվում դեպի Պարսկաստան տանող քարավանային մայրուղին։ Մյուս դարպասները գտնվում էին քաղաքի արևելյան պարիսպներում, որոնք բացվում էին Մեծամոր գետի վրա ձգված կամրջի կողմը, որտեղից սկսվում էր դեպի Երվանդաշատ, Արմավիր, հետագայում նաև՝ Վաղարշապատ ու երկրի հյուսիսարևելյան մասերը տանող մայրուղին։ Արտաշատի հյուսիսային դարպասը տեղավորված էր առաջին բլրի պարանոցի ու ջրաթմբի վրա, որոնցով քաղաքը պաշտպանվում էր հյուսիսային կողմից։ Հավանաբար, այն խանդակի վրա ձգված կամրջով կապված էր այն ճանապարհի հետ, որը տանում էր դեպի 25-30

³⁰ Տե՛ս **Ստրաբոն**, Օտար աղբյուրները հայերի մասին (քաղեց և թարգմանեց՝ Հ. Աճառյան), Երևան, 1940, էջ 57, 59։ **Մովսես Խորենացի**, նշվ. աշխ., էջ 176։

³¹ **Պլուտարքոս**, տեքստի թարգմանությունը ըստ Հակոբ Մանանդյանի, տե՛ս քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ.Ա, Երևան, 1944, էջ 121։

կմ հեռավորության վրա գտնվող թագավորական ամառանոց՝ Գառնի ամրոցը: Հետագայում՝ Խոսրով Բ Կոտակ թագավորի օրոք, ողջ հարթավայրը ծածկվում է արհեստական անտառներով: Արտաշատի այդ հյուսիսային դարպասից էր սկսվում IV դ. սկզբին հիմնադրված, դեպի Դվին տանող ճանապարհը: Մի քանի հայ պատմիչներ այդ դարպասը կոչել են Դվինի «Դնոյ»: Արտաշատից դուրս եկող գլխավոր ճանապարհների թիվն իրականում ավելին է եղել: Ըստ Պևտինգերյան ճանապարհացույց քարտեզի՝ դրանք հինգն էին, որ նույնպես կարելի է քիչ համարել՝ նկատի ունենալով քաղաքի՝ առանձին պարսպապատ բլուրներից կազմված լինելը: Ինչպես ցույց են տալիս պեղումների արդյունքները, քաղաքատարածքում եղած պարսպապատ միավորներն ունեն հետևյալ հնագիտական բնութագիրը:

Առաջին բլուրը հյուսիսային կողմում է, այն եռանկյունաձև է, ներսում փողոցները պարիսպներին զուգահեռ են: Այստեղ բացված սենյակներն ու սրահներն ուղղահայաց են պարիսպներին: Աշտարակները գլանաձև են շուրջ 4-5 մ տրամագծով: Ընդհանրապես բլրի պեղումներով հայտնաբերվել են պարսպապատ թաղամասի պաշտպանության համար նախատեսված ռազմական նյութեր:

Երկրորդ բլուրը առաջինի հարավային կողմում է: Տվյալ քաղաքամասը կամ բլուրը կազմված է երկու պարսպապատ տարածքներից: Հարավարևմտյան մասը համեմատաբար մեծ է. մակերեսը շուրջ 500 X 800 մ է: Այստեղ՝ արևմտյան բարձունքի վրա, տեղադրված է 70 մ բարձրությամբ և 100 X 100 մ չափերի քաղաքի ակրոպոլիսը (նկ. 9.1): Ուշագրավ է, որ այս բլուրը հարավային կողմից պարսպապատ փողոցով կապված է երրորդ բլրի հետ: Նույնպիսի մի պարսպապատ փողոց գոյություն ունի հանդիպակաց հյուսիսային կողմում, որ տարածքը կապում է առաջին բլրի հետ: Կարևոր է, որ երկրորդ բլուրը նախորդ մասի հյուսիսային և արևելյան կողմերում ունի ամրոցատակ տարածության նման պարսպապատ մի հատված ևս, որ ընդգծում է

երկրորդ բլրի՝ կենտրոնական կամ պարսպապատ քաղաքի նշանակություն ունենալը:

Երրորդ բլուրը երկրորդ բլրի համար պաշտպանական նշանակության է, որտեղից պարսպապատ մի փողոց ևս դեպի հարավ տանում է ընդարձակ թատրոնաձև մի տարածություն, որ բացվելով դեպի հարավ՝ ընդգրկում է 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ բլուրները, ընդ որում 8-րդ և 6-րդ բլուրներն ամֆիթատրոնաձև տարածության արևելյան և արևմտյան թևերն են, և վերջինը հենց Խոր Վիրապի տարածքն է: Ստացվում է, որ 3-րդ բլուրը դեպի 2-րդ բլուր տանող ամրացված հանգույց է, որ արևմտյան կողմից հսկվում է 4-րդ բլուրով, իսկ արևելյան կողմից՝ 5-րդ բլուրով: Ինչ վերաբերում է նշված բլուրների միջև եղած ընդարձակ հրապարակին, փաստորեն այն Արտաշատի առևտրական գոտին է կամ երբեմնի ագորան:

Հինգերորդ բլուրը կառուցապատված է առանձին շենքերով, որոնց առաջ գոյություն ունի ևս հրապարակաձև մի տարածություն: Ինչպես ցույց են տալիս հնագիտական գտածոները, այստեղ է եղել Արտաշատի պատմական մաքսատունը³²: Նշենք նաև, որ այս մասի պարիսպներն ունեն ուրարտական կառուցողական բնութագիր:

Վեցերորդ բլուրը 50 մ բարձրությամբ Արտաշատի պաշտամունքային կենտրոնն է եղել: Այստեղ՝ Խոր Վիրապի արևմտյան փեշերին, տեղադրված է եղել քաղաքի նվիրական Անահիտ աստվածուհու տաճարը³³:

7-րդ բլուրն իր հնագիտական տվյալներով արհեստագործական նշանակության է եղել, որ դեպի 4-րդ և 5-րդ բլուրների հետին մասում միասնականորեն խիստ ամրացված է:

³² Տե՛ս **Khachatrian Z.D.**, The Archives of Sealings found at Artashat, "Bulletin de correspondance Hellenique", Supplement 29, Paris, 1996, pp. 365-370, pl.73-76.

³³ **Gyulamiryan H.**, "Artashat, the capital of Kings", link from June 7, 2015, p. 3-4 of 4 pages.

Ց-րդ բլուրը նույնպես արհեստագործական նշանակության է: Հենց այստեղ են գտնվել քաղաքի պեղված մի քանի ճարտարապետական հուշարձաններ՝ բաղնիքը, թերմերը, հնձանն ու հոնիական տաճարը (նկ. 9.2):

Արտաշատից առանձնապես ուշագրավ են պեղված հետևյալ շենքերը.

Ա. Արտաշատ քաղաքի շինարարության ժամանակ՝ դեռևս Արտաշես Ա-ի օրոք, պաշտպանական կառույցների համակարգի, պալատական և այլ շենքերի հետ կառուցվել են նաև տաճարներ: Դրանց մասին Մովսես Խորենացու հաղորդած տեղեկություններից կարելի է կռահել, որ Արտաշատի կառուցման ժամանակ Հայաստանում եղել են երկու տիպի հեթանոսական տաճարներ՝ տեղական, որոնցում դրվում էին հայոց նախնիների աստվածների արձանները, և անտիկ, որոնցում դրվում էին հելլենիստական աստվածների արձանները³⁴: Արտաշատի տաճարների մասին Ագաթանգեղոսը հիշատակում է, որ քրիստոնեությունը պետական կրոն հռչակվելուց հետո քաղաքի ճանապարհին ավերվում է նաև Տիր-Ապոլլոնի մեհյանը³⁵: Ուշագրավ է Մովսես Խորենացու և Ագաթանգեղոսի միակարծությունը աստվածների արձաններով տաճարների տեղակայման հարցում: Անահիտ-Արտեմիսի տաճարը երկու հեղինակները հիշատակում են որպես Արտաշատում գտնվող, ինչպես նշվեց, Խոր Վիրապի արևմտյան փեշերին, իսկ Տիր-Ապոլլոնին՝ քաղաքից դուրս՝ Արտաշատի ճանապարհին:

Արտաշատի նորահայտ հեթանոսական տաճարը գտնվել է բաղնիքի հարևանությամբ: Այն Հայաստանի տարածքում պեղումներով բացված հնագույն տաճարն է, որ Գառնիի տաճարից հին է: Տաճարի լայնությունը 22.5 մ է, երկարությունը՝ 30 մ: Օրդերներն ակոսիկներով են (գանելիություններով), ճակտոնի երեք

³⁴ Տե՛ս **Մովսես Խորենացի**, էջ 122, 123:

³⁵ **Ագաթանգեղոս**, Հայոց պատմություն, թարգմ.՝ Արամ Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1983, ճը, 778:

գագաթներին եղել են համապատասխան ձևավորումով ճակտո-
նազարդեր (ակրոտերիոններ): Նշելի են քիվերի տակ բացված
850 նկարազարդ սասանյան կնքադրոշմները, որոնցով հաս-
տատվում է քաղաքի՝ առևտրի խոշոր կենտրոն լինելը:

Ինչ վերաբերում է քաղաքում եղած արձաններին, բավա-
կան է նշել պեղումներով հայտնաբերված՝ 60 սմ բարձրությամբ
արձանիկը, որ իր բոլոր մանրամասնություններով անտիկ է, և
պատահական չէ, որ անվանվել է արտաշատյան Վեներա:

Բ.Արտաշատը եղել է հայկական հելլենիզմի կարևոր
կենտրոն: Այստեղ ծուլված դրամների վրա մակագրությունները
հունարեն են: Ըստ հիշատակության՝ քաղաքում եղել է թատրոն:
Հայտնի է, որ Տիգրան Բ-ի որդու՝ Արտավազդի գրած ողբերգու-
թյունները բեմադրվել են Արտաշատի թատրոնում³⁶: Մնացյալ
շենքերից պատմական աղբյուրներում հիշատակվում են նաև
Արտաշատի փողերանոցը, նշված մաքսատունը, քաղաքային
ավագանուն պատկանող պալատները, 7-րդ և 8-րդ բլուրներում
բացված տարբեր արհեստանոցներ, զանազան բնակելի տները
և այլն³⁷:

Գ. Բաղնիքները թվով 3-ն են: Երկուսը 2-3-րդ դարերով
թվագրվող հռոմեական առանձնահատկություններով փոքր
բաղնիքներ են և տիպաբանական տեսակետից ընդհանրու-
թյուններ ունեն Գառնիի բաղնիքի հետ, մյուսը քաղաքային բաղ-
նիք է, որ բացվել է 2003 թ. պեղումների ընթացքում: Բաղնիք-
ներում ջրամատակարարումը և ջրահեռացումը կատարվել են
տեղանքի տարբերության ստեղծումով: Դրանք ունեն հարավա-
յին և հարավարևելյան կողմնորոշում, որպեսզի չզրկվեն արևա-
հարությունից:

Պատերի հիմքերն իրականացված են կիսամշակ ոչ խոշոր
քարի շարվածքով: Պատերը շարված են մեծ սպիտակ կրաքարի

³⁶ Гоян Г. 2000 лет армянского театра, т. 1, Театр Древней Армении, М., 1952
(«Первый армянский драматург»), стр. 129-174.

³⁷ Gyulamiryan H., ibid, p. 2.

և տուֆի ուղղանկյուն քարակտորներով, ինչպես նաև թրծված աղյուսի հորիզոնական միջանկյալ շարվածքով: Կապակցող նյութը կրաշաղախն է: Ծածկերը, հավանական է, եղել են թաղակապ և գմբեթաձև: Հատակները պատված են խճապատկերներով: 2014 թ. պեղումների ընթացքում բաղնիքի տարածքում բացվել է խճանկարի բեկոր, որը զուգահեռներ ունի Պոմպեյում և Հերկուլանումում³⁸: Այս տիպի կառույցներից առանձնապես մեծ կերևոթյուն ունի 8-րդ թաղամասի հարավ-արևմուտյան տարածքում, 2003 թ. պեղումների ժամանակ, Արաքսի ափին հայտնաբերված թերմը: Այն կազմված է 9 զանազան մեծության սենյակներից: Դահլիճներից երկուսի հատակը հիպոգաուստիկ սյունիկներով բարձրացված է գետնից, որ հայտնի է բազմաթիվ անտիկ նման զուգահեռներից:

Արտաշատի քաղաքատարածքը ծավալվել է հաջորդական 9 բլուրների վրա, ինչպես նաև երկուսը՝ քաղաքի հարավարևելյան կողմում: Այստեղ կենտրոնականը երկրորդ բլուրն է: Փաստորեն բերդաքաղաքը երկրորդ բլուրն է իր ակրոպոլիսով հանդերձ: Այն երկմաս է, ինչպես նաև արևելյան և արևմտյան կողմերից պաշտպանված լինելով Արաքս և Մեծամոր գետերով՝ հյուսիսային և հարավային կողմերից ունեցել է առանձին ամրություններ: Արտաշատի գործարքների մասը, իր ագորայով հանդերձ, ծավալվել է հարավային կողմում, որի շուրջը եղել է հինգերորդ թաղամասի մաքսատունը, մյուս արհեստավորական թաղամասերը և Խոր Վիրապը: Մինչդեռ քաղաք մտնող քարավաններն իջևանել են Խոր Վիրապից հարավ-արևելք գտնվող արվարձաններում:

Արտաշատ քաղաքի անկումը տեղի է ունեցել ստրկատիրական հասարակարգի քայքայման, քաղաքի ընդհանուր տրնտեսական անկման, ինչպես նաև Երասխ գետի հունի փոփոխման պատճառով: Արտաշատը գոյատևել է Ք.ա. II դ. (189 թ.) մինչև մ.թ. IV դ. սկիզբ՝ շուրջ 500 տարի:

³⁸ Gyulamiryan H., ibid, p. 2.

ԶԱՐԻՇԱՏ. եղել է Վանա լճի հյուսիսարևելյան ափերի արքունական քաղաքներից մեկը: Այն, հավանաբար, կապ ունի ներկայիս Արճեշի տարածքում գտնվող Զարնակիի հետ (նկ. 10): Բնակատեղին մեզ է հասել նախաբնակեցված հատակագծային իրավիճակում: Արճեշ քաղաքի հարևանությամբ 270 հա տարածք զբաղեցնող տվյալ վայրը հիշեցնում է հսկա ճամբարային քաղաք, որը մասնագետների ուշադրությունը գրավել է որպես հռոմեական արևելյան ծայրամասային բնակավայր³⁹: Բնականաբար, տվյալ բնակավայրի գոյությունը չի վրիպել նաև հայկական պատմական քաղաքաշինությամբ զբաղվող մասնագետների աչքից, որոնք այն համարում են պատմական Ադիովիտը, որտեղ հիշատակվում է Զարիշատ հայկական անտիկ կենտրոնը⁴⁰:

ԶԱՐԵՀԱՎԱՆ. գտնվել է Երվանդաշատի հարավային կողմում՝ Բագրևանդի շրջակայքում: Քաղաքը Շապուհի ավերածություններից հետո դարձել է վաղմիջնադարյան ժամանակների աննշան գյուղ:

ՆԱԽՃԱՎԱՆ. Հայաստանի հայտնի առևտրական հանգույցներից մեկն է, որը, ավերվելով IV դ. երկրորդ կեսին, միջնադարում վերականգնվել է: Տեղում այսօր կան արքունական ժամանակներին վերագրվող փոքր ստորգետնյա հուշահամալիրի մնացորդներ և անճանաչելի դարձած եռակամարի ավերակներ, որի արտաքին երեսապատումը չկա:

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ (նկ. 11): Հիմնադրվել է Ք.ա. 78-ին, երբ Տիգրան Բ-ն, ավարտելով իր նվաճողական ար-

³⁹ Տե՛ս **Burney C. A., Lawson G. R.**, Measured Plans of Urartian Fortresses, Anatolian Studies, 10, p. 177-196. Հմմտ. Warwick Ball, Rome in the East, Routledge, 2002, p. 254-255.

⁴⁰ Տե՛ս **Հարությունյան Վ.**, Հին և միջնադարյան Հայաստանի քաղաքաշինությունը, Լենինգրադ, 1964: **Զարյան Ա.**, Ակնարկներ Հայկական քաղաքաշինության պատմության, Երևան, 1979: **Քերթմենջյան Դ.**, Միջնադարյան Հայաստանի քաղաքների առևտրահասարակական կենտրոնները, Լենինգրադ, 1983:

շավանքները, սկսեց զբաղվել երկրի զարգացմամբ: Բացի Տիգրանակերտ մայրաքաղաքից, նույնանուն քաղաքներ հիմնադրել է նաև տերության այլ վայրերում՝ Ուտիքում, Նախիջևանում, Արցախում և այլն: Դրանց թիվը տասից ավելի է: Ըստ արքայի մտահղացման՝ Տիգրանակերտ մայրաքաղաքը պետք է լիներ ոչ միայն միջազգային առևտրի և արհեստագործական խոշոր հանգույց, այլև հելլենիստական մշակույթի կարևոր կենտրոն: Հռոմեացի և հույն պատմիչներ Ապպիանոսը, Պլուտարքոսը և Ստրաբոնը Տիգրանակերտը հիշատակում են հռոմեացի զորավար Լուկոլլոսի՝ Հայաստան արշավելու, քաղաքի պաշարման ու գրավման կապակցությամբ⁴¹:

Մայրաքաղաք Տիգրանակերտի աշխարհագրական վայրը դեռևս հստակորեն սահմանված չէ: Հավանական վարկած է, որ քաղաքի ավերակները գտնվում են Քլեմարիոն (հայերեն Քղիմար) բնակավայրի տարածքում՝ Սիլվանից (Մարտիրոսուպոլիս, Նփրկերտ, Մուֆարգին) ոչ հեռու՝ Դիարբեքիր (պատմական Ամիդ) քաղաքից մոտ 60 կմ հյուսիս-արևելք՝ Սասնա լեռների հարավային ստորոտին՝ Բաթման-Սու գետի կամրջի հարևանությամբ⁴²: Սա հատուկ ուսումնասիրության առարկա է դարձել Թովմաս Սինքլերի կողմից, ով պատմական աշխարհագրության հայտնի մասնագետ է և ունի քառահատոր աշխատություն՝ նվիրված այժմյան Արևելյան Թուրքիայի տարածքին⁴³: Ակնարկվող հետազոտությունը փարիզյան «Հայկական ուսումնասիրություններ» հանդեսում երկու մասով տպագրված հոդված է⁴⁴, որի

⁴¹ Այդ մասին տե՛ս **Մանանդյան Հ.**, Տիգրան Բ և Հռոմը. նոր լուսաբանությամբ ըստ սկզբնաղբյուրների, Երևան, 1940:

⁴² Տե՛ս Հանրագիտարան, Տիգրանակերտ, <https://www.dasaran.am/apps/wiki/view/id/7623>:

⁴³ **Sinclair T. A.**, Eastern Turkey: An Architectural and Archaeological Survey, Vol.s 1, 2, 3, 4 (London: Pindar Press, 1987, 1989, 1989, 1990)

⁴⁴ See **Sinclair Thomas A.**, "The Site of Tigranocerta. I," *Revue des Études Arméniennes* 25 (1994-95): pp. 183-254; idem, "The Site of Tigranocerta. II," *Revue des Études Arméniennes* 26 (1996-97): 51-117.

արդյունքները համապատասխանում են վերոհիշյալ վարկածին, փաստորեն տվյալ հարցը նախօրոք քննարկված էր հեղինակի քառահատորում⁴⁵, նշված հոդվածներն ավելի ուշ կատարված հրատարակություններ են և բովանդակում են հավելյալ տեղեկություն: Այսինքն՝ Տիգրանակերտի տարածքի տեղն ավելի ճշգրտվում է որպես Քլոմարիոնի հետ, որ հայտնի է տեղում եղած պարիսպների տարածքում գոյություն ունեցող ընդարձակ ախոռներով⁴⁶, ինչը համընկնում է Ապպիանոս Ալեքսանդրացու վկայակոչության հետ⁴⁷: Փաստորեն հեղինակը քաղաքատեղի որոշման համար կարևոր նշանակություն է տալիս նաև արքունական պողոտայի մանրամասնությունները հետազոտելուն և այլն:

Այսպես թե այնպես, ակնհայտ է, որ Տիգրանակերտի և իր ժամանակի հայկական բնակավայրերի կառուցապատման մասին տեղեկությունները մակերեսային են և նույն բովանդակությամբ կրկնվում են բազմաթիվ հեղինակների մոտ: Դրանցից առանձնացվում են վերջին տասնամյակների մի քանի հրատարակություններ⁴⁸, այդ թվում և Թ.Սինքլերի նշված աշխատու-

⁴⁵ Sinclair T. A. (1989-12-31). Eastern Turkey: An Architectural & Archaeological Survey, Volume III. Pindar Press. pp. 378-385:

⁴⁶ Անդ, էջ 381:

⁴⁷ **Ապպիանոսը** հայտնում է, որ Տիգրանակերտն ունեցել է 50 կանգուն բարձրությամբ պարիսպներ, որոնք այնքան լայն էին, որ դրանց մեջ շինել էին ձիերի ախոռներ, պահեստներ և այլն: Տե՛ս “The history of Appian of Alexandria, in two parts. National Trust Images. National Trust Collections Registered Charity No. 205846, <http://www.nationaltrustcollections.org.uk/results?Maker=Appianus+of+Alexandria+%2895-c.165%29>.

⁴⁸ Այդ հրատարակություններից են՝ **Հակոբյան Թ.**, Պատմական Հայաստանի քաղաքները (Link <http://armenianhouse.org/index-am.html>), **Հակոբյան Հ.**, Երևան, 2005: **Հայաստանի և հարակից երկրների տեղանունների բառարան**, հինգ հատորով, **Հայկական ճարտարապետության պատմություն վեց հատորով**, հատոր Ա, պատ. խմբագիր՝ **Գ. Տիրացյան**, Երևան, 1996: **Արցախի Տիգրանակերտի պեղումներն ու դրա հետ կապված հրատարակությունները** և այլն: Այս շարքում պետք է դասել վերջին տասնամյա-

թյունը: Այնուամենայնիվ հարցն էությանմբ չի փոխվում, քանի որ դեռևս բացակայում են ենթադրված տարածքների կոնկրետ հնագիտական տվյալները:

Տիգրանակերտը՝ որպես Հայաստանի 5-րդ մայրաքաղաք, հիմնադրվել է Ք.ա. 78 թ. և ավերվել է Լուկուլլոսի կողմից Ք.ա. 69 թ.: Ք.ա. 55 թվականին՝ Տիգրան Մեծի վախճանից հետո, Տիգրանակերտը դադարել է Հայաստանի մայրաքաղաքը լինելուց: Սակայն ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այն չի դադարել գոյատևել ու նույնիսկ վերաճել է՝ դառնալով երկրի կարևոր ամրություններից մեկը: Ըստ Հայկ Հակոբյանի հոդվածի տվյալների՝ քաղաքի կարևորագույն տարեգրական իրադարձությունները հետևյալներն են⁴⁹: Առաջինը պետք է նշել Հայաստանի հռչակավոր մայրաքաղաք Տիգրանակերտի՝ Պոմպեոսի հետ մ.թ.ա. 65 թ. կնքած հաշտությունը: Մյուսը՝ Դոմիցիոս Կորբուլոնի՝ 60 թ. Հայաստան կատարած արշավանքի ընթացքում նշվող Տիգրանակերտի կատաղի դիմադրությունը: Կարևոր է նույնպես Շապուհ Բ-ի կողմից 4-րդ դարում արձանագրված այն վկայությունը, որ. «...զմեծ քաղաքն Տիգրանակերտ որ էր ի գավառին Աղձնեաց յիշխանութեան բդեշխին. քառասուն հազար երդ զայն նոյն հետայն ի գերութին խաղացուցին»⁵⁰: Ուշ Անտիկ դարաշրջանի և վաղ միջնադարի սահմանագլխին է վերաբերում Տիգրանակերտի հունարեն ընդարձակ վիմագիր արձանագրությունը, որի քարերի մի մասը հետագա վերակառուցումների ժամանակ անկանոն դասավորությամբ հայտնվել էր պարսպի շարվածքի զանազան տողերում: Օրինակ, 1560 թ. Տիգրանակերտի ավերակներն այցելած պորտուգալացի ճանապարհորդ Անտոնիո Տենրեյրոն տեսել էր այդ արձանագրու-

կում ծավալված **Բարև էրզիր հաղորդաշարի**՝ Տիգրանակերտին նվիրված հաղորդումը և այլն:

⁴⁹ Հակոբյան Հ., Հին Հայաստանի մայրաքաղաք Տիգրանակերտը, ՊԲՀ, 2007, Թ-3, էջ 21, 22:

⁵⁰ Փաւստոսի Բիւզանդացոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, Չորրորդ դպրութիւն, գլուխ ԻԴ, էջ 219:

թյունը քաղաքային կամարադարպասի ներքին մակերեսին⁵¹: Քաղաքի արձանագրությունները փաստագրող Կ.Ֆ.Լեման-Հաուպտը 1889-1899 թթ. վկայում է այդ արձանագրության՝ հին դարպասի վրա լինելու մասին: Նույն արձանագրության մասին 1859 թ. նշում է նաև Ջ. Թեյլորը: Ըստ նրա՝ խնդրո առարկա արձանագրությունն իր որոշ հատվածներով գտնվել է դեպի քաղաք տանող հյուսիսային դարպասի կամարակապ անցումներից մեկի ներքնամասում,⁵²:

Կարևոր են Ջ. Թեյլորի նշված աշխատությանը կից ներկայացված և մեր կողմից ուսումնասիրված⁵³, Հ. Կիպերտի՝ Արածանիի տարածքի քարտեզը (նկ. 11.1) և դրան կից Արզան (Արածանի) անունը կրող քաղաքի հատակագիծը: Բնականաբար Արածանիի կենտրոնը հենց Աղծնիքի Տիգրանակերտն է, որ զուգահեռ ուսումնասիրություններով, ինչպես Թ.Սինքլերի՝ վերևում նշված հոդվածներում, նույնացվում է Տիգրանակերտի հետ: Մանավանդ որ քաղաքի մակերեսը համարժեք է Արտաշատ մայրաքաղաքի, ինչպես նաև հելլենիստական պրիենեի, Տիգրանի կողմից նախասիրված Անտիոքի և այլ հռոմեական բազմաթիվ ճամբարային քաղաքների հետ, բնականաբար նշված փաստը միանգամայն համոզիչ է և առիթ է տալիս ենթադրելու, որ այդ հատակագիծը հենց Տիգրանակերտինն է: Ընդգծելու հանգամանք է նաև այն, որ և՛ Արտաշատի, և՛ Տիգրանակերտի բնակավայրերի փնջավորման մեջ նկատելի է ուրարտական բերդաքաղաքների տարածքային սխեմայի առ-

⁵¹ Հակոբյան Հ., Հին Հայաստանի..., էջ 22:

⁵² Taylor J., Travels in Kurdistan. – Journal of Royal Geographic Society, 1865, p. 24.

⁵³ Տե՛ս Հին Հայաստանի քաղաքների հորինվածքային դասակարգման հարցի շուրջ, Հուշարձան, տարեգիրք, Դ-Ե, 2008, էջ 43-53, Ինչպես նաև՝ **Քերթմենջյան Դ.**, Հին Հայաստանի քաղաքների հորինվածքային դասակարգման հարցի շուրջ, «Տիգրան Մեծ», Տիգրան Մեծի գահակալության 2100-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու (2005), Երևան, 2011, էջ 221-226:

կայությունը, փաստորեն դրանք ուրարտական էգալի (կենտրոնական ամրոցի) և ուրուների (շրջակա պաշտպանական բերդերի) փնջավորման սկզբունքով են⁵⁴: Ավելին, նշված զուգահեռների մեջ Տիգրանակերտին բնորոշ են նաև միջագետքյան առանձնահատկությունները, նկատի ունենք բերդաքաղաքի կանոնավոր երկրաչափական ձևը, ինչպիսիք են Խորսաբադն, Տուրշարուկին ու Բաբելոնը և այլն:

Ընդունելով, որ Ջ. Թեյլորի հատակագիծը Տիգրանակերտի սխեմատիկ հատակագիծն է, վերլուծենք այն: Քաղաքի տարածքը շուրջ 150 հա է: Հյուսիսարևմտյան կողմով անցնում է ուշ շրջանի անվանումով Խուզե-Սու լայնահուն գետը: Նրա ձախ ափին կախված է ամրոցը: Այն, բերդաքաղաքի հետ միասնական պարիսպներով պատված լինելով, միաժամանակ տեղադրված է մի քանի հարյուր մետր հեռու: Սա միանգամայն հելլենիստական քաղաքաշինական սկզբունք է: Բերդաքաղաքն ուղղանկյուն է, հյուսիս-հարավ ուղղությամբ՝ շուրջ 1 կմ, իսկ արևելք-արևմուտք ուղղությամբ՝ 2 կմ-ից ավելի: Եթե համարենք, որ ամրոցը բերդաքաղաքի հյուսիսային կողմում է, ապա ուղղանկյան մյուս կողմերի մեջտեղի հատվածներում քաղաքի դարպասներն են, որոնցից յուրաքանչյուրն ուներ իր շարժական կամուրջը: Քաղաքի հյուսիսարևմտյան անկյունում կա մի այլ դարպաս ևս, որ դեպի ներս, ինչպես ընդունված է հելլենիստական քաղաքներում, աղբյուրներ են: Իսկ դարպասի մոտ ցույց է տրված մի բլուր: Բերդաքաղաքը ողջ պարագծով մեկ ունի խանդակ, որ ամրոցատակի արևելյան և արևմտյան կողմերից միանում է գետի հետ՝ ցույց տալով երբեմնի փականների առկայությունը: Թեկուզ մոտավոր, այնուամենայնիվ բերդաքաղաքի հատակագիծը քվադրանտային է, դրանում կան դեկումանուսի և սյունազարդ փողոցի՝ Քարդումի կանոնիկ տեղադրությամբ հետքերը: Քաղաքին կի՞ց, թե՞ ներսում եղել է Տիգրան Մեծի

⁵⁴ Հմմտ. Հայկական ճարտարապետության պատմություն վեց հատորով, հատոր առաջին, էջ 92-94:

բարեկարգ պալատը՝ որսի համար նախատեսվող ընդարձակ անտառային տարածքներով, մի հանգամանք, որ կրկնվում է և՛ Երվանդաշատի Ծննդոց անտառում, և՛ Արտաշատում, և՛ Արտամետում, և՛ Դվինում և այլն:

Ամփոփելով կարելի է եզրակացնել, որ Զ. Թեյլորի կողմից ներկայացված քաղաքը ամենայն հավանականությամբ Տիգրանակերտի հատակագիծն է, որի համար ընդունելի պետք է համարել Մուֆարգին-Բատման Սու-ի, ինչպես նաև Սիլվան-Մարտիրոսուպոլսի վայրը: Ներկայիս Սիլվանի քաղաքի կենտրոնը միահյուսված է հին քաղաքի պաշտպանական ցանցի մեջ, որ դժվարացնում է տեղում հնագիտական հետախուզությունների իրականացումը: Փաստորեն Տիգրանակերտը 4-րդ դարում, ավերվելով Շապուհ Բ-ի կողմից, վերածվել էր ավանի⁵⁵: Հենց այդ պատճառով էլ այն պաշտպանական առումով այնքան էր թուլացել, որ բյուզանդացի կայսրերի՝ Անաստասիոսի և Հուստինիանոսի կողմից անհրաժեշտ էր հիմնովին վերակառուցողական միջամտություն կատարել: Սա է, որ նկարագրվում է Պրոկոպիոսի կողմից և մանրամասնությամբ բերվել է Նիկողայոս Ադոնցի աշխատությունում⁵⁶: Վերոհիշյալ փաստերի օգտին են խոսում նաև պարսիկ ճանապարհորդ Նասիրի Խոսրոյի՝ 1046 թ. Մուֆարգինի նկարագրության տվյալները⁵⁷, ինչպես նաև արաբ աշխարհագիր Յակուտ էլ Համուփի (13-րդ դար) նույն վայրի, բայց այս անգամ Մարտիրոսուպոլիս անվամբ բնակավայրի նկարագրությունը⁵⁸: Առանց խորանալու Յակուտի նկարագրության մեջ՝ միայն նշենք, որ աշխարհագիրը նշում է քաղաքային 8 դարպասներ, որոնցից մեկը նաև Արածանիի դուռն էր: Երկու նկարագրություններն էլ ըստ էության հավաստում են

⁵⁵ **Փավստոս Բուզանդ**, Հայոց պատմություն, Երևան, 1947, էջ 262:

⁵⁶ **Ադոնց Ն.**, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Երևան, 1987, էջ 164:

⁵⁷ **Насир-и-Хосроу**, Сафарнаме, М.-Л., 1933, стр. 40.

⁵⁸ Տե՛ս «Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին», կազմեց՝ **Նալբանդյան Հ.**, Երևան, 1965, էջ 112-116:

այն փաստը, որ Մուֆարգին-Մարտիրոսուպուլիսը Տիգրանակերտի շուրջը եղած պաշտպանական բնակավայրերից է: Փաստորեն Տիգրանակերտը 13-րդ դարից հետո ամբողջապես լքվել է, և նրա ավերակները նշմարելի են Մուֆարգին-Մարտիրոսուպուլիս քաղաքից ոչ հեռու գտնվող Քղիմար փոքր բնակավայրի տեղում: Ինչպես նաև քաղաքի հատակագծային տվյալները պահպանվել են Ջ.Թեյլորի կողմից արված մոտավոր չափագրության մեջ: Իսկ Մուֆարգինի և Մարտիրոսուպուլի տվյալները շարունակվել են Սիլվանում, ինչպես որ տեղեկացնում է Կիրակոս Գանձակեցին, որ դրանք նույն բնակավայրն են⁵⁹ տարբեր ժամանակների անվանումով:

ԱՐՑԱԽԻ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ (նկ. 12): Արցախի Մարտակերտի շրջանի հարավ-արևելքում՝ Խաչեն գետի աջ ափին է: Գտնվելով Սյունիքից Վրաստան տանող միջազգային առևտրական ճանապարհի վրա՝ Արքայական ճանապարհով կապված էր նաև Արմավիրի, Արտաշատի, մայրաքաղաք Տիգրանակերտի և Տիգրան Բ-ի տերության այլ օղակների հետ: Արցախի Տիգրանակերտը շրջակա հարթավայրի վրա ունեցած գերիշխող դիրքի, ինչպես նաև թիկունքից Արցախյան լեռնաշղթայով պաշտպանված լինելու շնորհիվ միշտ էլ դժվարամատչելի է եղել թշնամու հարձակումների ժամանակ: Իրականում Արցախի Տիգրանակերտը Տիգրան Մեծի կողմից կառուցապատված և իր անունը կրող մեկ տասնյակի հասնող բնակավայրերից մեկն է, որ հիմնադրվել է մ.թ.ա. 1-ին դարում: Բնակավայրի տարածությունը 70 հա է, որ բովանդակում է անտիկ, վաղ քրիստոնեական և միջնադարյան ժամանակաշրջաններին պատկանող հուշարձաններ: Այստեղ պեղումները սկսվել են 2005 թ. և անընդմեջ շարունակվում են մինչև օրս: Այսինքն՝ բազմաթիվ հարցերի պատասխաններն ընթացքի մեջ են: Արշավախմբի ղեկավարն է պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր Համլետ Պետրոսյանը:

⁵⁹ Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխատասիրութեամբ Կ. Մելիք-Օհանջանեանի, Երևան, 1961, էջ 128:

Քաղաքի մասին հիշատակում են Սեբեոսը և Մովսես Կաղանկատվացին:

Այստեղ կատարվող պեղումների արդյունքները կարելի է հաստատագրել ըստ հետևյալի.

ա. 2005 թ. պեղումներ, որոնց ընթացքում ճշգրտվել է Արցախի Տիգրանակերտի կոնկրետ տեղադրությունը⁶⁰:

բ. 2006-2007 թթ. պեղումներ, որոնց ընթացքում դուրս է բերվել միջնաբերդի «ծիծեռնակապոչ շարվածքով պարիսպը» (նկ. 12.1):

գ. 2008 թ. պեղումներ, որոնց ընթացքում բացվել է բերդաքաղաքը իր հյուսիսային պարսպով, ամրացված թաղամասերի հատվածով, կենտրոնական թաղամասով ու դամբարանադաշտով և աղբյուրի հատվածով:

դ. 2009 թ.-ից մինչև օրս վերևում նշված քաղաքամասերը պեղումներով աստիճանաբար ընդարձակվում և մանրամասնվում են: Փաստորեն սկսելով սահմանափակ տարածքից՝ այսօր, ի պատիվ արշավախմբի մասնակիցների, Արցախի Տիգրանակերտը դարձավ հայկական մշակույթի ակտուալ և մնայուն պատմական հնավայրերից մեկը:

Տեղագրական պայմանները ելակետ են եղել Տիգրանակերտի քաղաքաշինական կառուցվածքի ձևավորման համար: Այն կազմված է բարձունքը զբաղեցնող ամրոցից, Վանքասար լեռան հարավարևելյան լանջին ծավալվող բերդաքաղաքի բնակելի թաղամասերից և լեռան ստորոտում՝ հարթավայրի վրա, կառուցապատված քաղաքատարածքից: Սա բաղկացած է Խաչենագետի ճյուղավորումից առաջացած երեք մասերից: Մեջտեղում կենտրոնական թաղամասն է, դեպի արևմուտք՝ գետի աջ վտակից մյուս կողմ, 5-8-րդ դարերի քրիստոնեական դամբարանադաշտն է, իսկ դեպի արևելք՝ գետի աջ վտակից մյուս կողմ, 18-րդ դարի ապարանքն է՝ հարակից ջրի ակերով: Քաղաքի մերձակայքում բացվել են պաշտամունքային – քաղաքային

⁶⁰ <http://www.tigranakert.am/excavations/?id=6>:

համալիրը (նկ.12.2), նրա ստորոտով անցնող ժայռափոր ջրանցքը, Խաչենագետի ձախ ափին գտնվող վաղմիջնադարյան ամրոցը և այլն:

Արցախի Տիգրանակերտի միջնաբերդի վայրը ամբողջապես ժայռակերտ բնակեցման տարածք է, տեղում կան ժայռափոր կառույցներ, ինչպիսիք են հայկական հնադարյան զանազան հուշարձանները, որոնցից նշենք Աշտարակի մերձակա Ագարակը: Միջնաբերդի մասին արշավախմբի ղեկավարը նշում է, որ այն կառուցվել է Փիլոն Ալեքսանդրացու աշխատության համապատասխան⁶¹: Միջնաբերդն իր կառույցներով հիմնականում բացվել է 2006-2008 թթ. պեղումներով: Ընդ որում տարածքի գազաթային մասում իրականացված պեղումները ցույց են տալիս, որ 12-13-րդ դարերում այս հատվածը վեր էր ածվել խիտ բնակեցված թաղամասի: Պարիսպն այլևս կորցրել էր իր պաշտպանական գործառույթը: Թե ինչպիսի կառուցապատում ունեն Միջնաբերդն ավելի վաղ և ի մասնավորի Տիգրան Մեծի ժամանակ, ցույց կտան հետագա պեղումները:

Արցախի Տիգրանակերտի «ամրոցը» ըստ էության նկատի ունի քաղաքի պարսպապատ ենթամասը: Ինչպես հայկական անտիկ ժառանգության մյուս օրինակները, միջնադարում այն միջնաբերդի վերածված ամրոցի անմիջական շարունակությունն է կազմում: Քաղաքամասը երկու ճյուղերով ձգվում է դեպի արևելք՝ «Արքայական աղբյուրները»: Արշավախմբի ղեկավարի մեկնաբանությամբ պեղումներն իրականացնողների համար սկզբում հասկանալի չէր, թե այդ աղբյուրների մերձակայքում ինչ պետք է լիներ, բայց հետագա պեղումները բացահայտեցին, որ Արքայական աղբյուրներն ինչ-որ առումներով ներառված են եղել ամրոցի պաշտպանական համակարգի մեջ, և եթե չլինեին այդ աղբյուրները, ապա ամրոցը հաստատապես այդ վայրում չէր կառուցվի⁶²: Բնականաբար այստեղ տեղին է

⁶¹ [news.am/arm/news/388211 .html](http://news.am/arm/news/388211.html):

⁶² <https://168.am/2015/09/02/532244.html>

նշել, որ իրապես բերդաքաղաքի դարպասների և արվարձանների դարպասի հանգույցում միշտ էլ ընդունված է եղել կառուցել «Քաստել»-ներ ... (տե՛ս նաև Տիգրանակերտ մայրաքաղաքը):

Արցախի Տիգրանակերտի քաղաքաշինական հորինվածքի մասին ուշագրավ է արշավախմբի ղեկավարի հետևյալ տեղեկությունը, որ (քաղաքի ամրացված) թաղամասի յուրահատկությունն այն է, որ այնտեղ բոլոր պատերն ուղիղ են և հատվում են ուղիղ անկյան տակ: Դա անտիկ աշխարհում մշակված, դեռևս Հունաստանից եկող համակարգ է, այսինքն՝ իրական քաղաքը պետք է ունենա միայն ուղիղ փողոցներ (նկ. 12.3), ուղիղ պատեր, և այդ պատերը պետք է անպայման հատվեն ուղիղ անկյան տակ: Հայկական ավանդույթներում, սկսած անտիկ դարաշրջանից մինչև մեր օրերը, մենք նման կառուցվածքով քաղաքներ ունեցել ենք: Դրա ամենադասական օրինակը Գորիս քաղաքն է, որը կառուցվել է ֆրանսիացի ճարտարապետների նախագծով: Այսինքն՝ այն քաղաքակրթական շարմը, որ երևան է բերում Տիգրանակերտը, ուղղակի ուշագրավ է⁶³: Փաստորեն հեղինակը նկատի ունի, որ անտիկ քաղաքը կառուցապատված էր կանոնավոր հատակագծմամբ, որ անտիկ և հելլենիստական քաղաքաշինության էական բնութագրերից էր:

Բերդաքաղաքի կամ պարսպապատ քաղաքի վերաբերյալ առայժմ հայտնի են պեղման ընթացքում եղած հյուսիսային պարիսպները: Սա «ամրացված թաղամաս» անվանումով բերդաքաղաքի այն հատվածն է, որ սկսվել էր պեղվել 2006-2008 թթ.: Այստեղ պեղումների ամենամեծ հաջողությունն ավելի քան 9 մետր տրամագծով շրջանաձև աշտարակի հայտնաբերումն էր, որի պատերը կերտված են սրբատաշ ու ծիծեռնակապոչ միացումներով կվադրերի օգնությամբ, պահպանվել են մինչև հինգ շարք բարձրությամբ: Պեղումներով բացված պատի երկարությունը մոտ 60 մետր է: Առկա չափերով այն իր ժամանակի պեղված ամենամեծ պատերից մեկն է Անդրկովկասում: Ինչպես

⁶³ Նույն տեղում:

ասվում է պեղումների հաշվետու զեկուցագրում. «Զարմացնում են միջոցառման վիթխարիությունը, հորինվածքի ճկունությունն ու քարի մշակման ու շարվածքի տեխնիկական բազմազանությունն ու կատարելությունը: Կասկածից դուրս է, որ միայն արքայական ուժն ու բարձր կազմակերպվածությունը կարող էին գրավականը լինել ժամանակի բարձր տեխնիկական մտքի ու վարպետության նման լայնամասշտաբ համադրման ու իրագործման»⁶⁴: Փաստորեն 2006-2008 թթ. պեղումներով Արցախի Տիգրանակերտն արդեն համարյա ամբողջությամբ ուրվագծվել էր իր ամրացված թաղամասի հարավային պարսպապատի ժայռափոր հիմքերով հանդերձ, որ ձգվում է 450 մ երկարությամբ, որից բացվել էր դեռևս 320 մետր՝ զբաղեցնելով միջին հաշվով շուրջ 2500 մ²: Ամրացված թաղամասում շինությունները տեղադրված են եղել մի քանի դարավանդների վրա: Պեղումներով բացվել է այդ դարավանդներից մեկի հենապատը՝ ավելի քան 60 մետր երկարությամբ և այլն: Վստահաբար կարելի է շեշտել, որ բերդաքաղաքի պարիսպներն ուրարտական առանձնահատկություններով են: Այն ունի հատակագծային դյուրաթեք՝ ռելիեֆին հարմարվող ուրվագիծ, որ կազմված է պարիսպների առանձին հատվածներից, որոնք համադրվել են մեծադիր բոլորակ և ուղղանկյուն հատակագծային լուծումներ ունեցող աշտարակներով:

Բոլորակ աշտարակներն ունեն 9 մ տրամագիծ, դրանք իրար միացնող պարիսպների երկարությունը տատանվում է 15-19 մ-ի միջև, որոնցով իրականացվել են 2-5 մ-ի միջև տատանվող թեքումներ: Պարիսպների կառուցման մեջ օգտագործված չափման միավորը հիմնականում 50 սմ-ի սահմաններում է: Այն մոտավորապես հավասար է կանգունին՝ 52 սմ, որը լայնորեն տարածում ունի ինչպես ուրարտական ճարտարապետության, այնպես էլ Առաջավոր Ասիայի երկրների հելլենիստական ճարտարապետության մեջ: Տիգրանակերտի պաշտպանական հա-

⁶⁴ <http://www.tigranakert.am/excavations/>.

մակարգի նկատելի առանձնահատկությունն այն է, որ պարիսպներն ու աշտարակներն ունեն վերծիգ համաչափությամբ՝ սպիտակ կրաքարից իրականացված հիմքեր, որից հետո դրանք կառուցվել են հում աղյուսով: Պետք է ասել, որ Արցախի Տիգրանակերտում կառուցապատումն իրականացվել է հեղինիստական նորագույն տեխնիկայով, քարի վարպետ մշակման և բնական ժայռի լիարժեք օգտագործման պայմաններում: Պատերը շարված են չոր՝ ծիծեռնակապոչ կապման եղանակով: Կրաշաղախը, որի մեջ բացակայում է ավազը, միայն բացվածքները լցնելու դեր է կատարել: Ավազի բացակայության պատճառով այդ շաղախն ամուր չէ և շաղկապում չի ապահովում: Պատի հիմնական կրող զանգվածը դարձյալ քարն է: Քարերն ունեն շփման մակերեսների կատարյալ տաշվածք, դրսի երեսների բարձիկատեսք (ռուստիկ) մշակում ու վարպետորեն արված եզրակոսներ (քարերի արտաքին եզրերի սրբատաշ մշակումներ) և իրար միացված են ծիծեռնակապոչ կապերով: Այս տեխնիկան լայնորեն տարածված է Փոքր Ասիայում, Միջագետքում, Արարատյան դաշտում: Արցախում այն հանդիպում է առաջին անգամ Տիգրանակերտում⁶⁵:

«Կենտրոնական թաղամասը» իր առաջին իսկ արդյունքներով քրիստոնեական բովանդակություն ունի: Այստեղ 2006-2008 թվերի պեղումներով բացվել է 5-6-րդ դարերի բազիլիկա, որն իր տիպաբանական տվյալներով միանգամայն հարստացնում է հայկական վաղմիջնադարյան ճարտարապետությունը: Վաղքրիստոնեական միանավ բազիլիկան բացվել է ավելի քան 21 մետր երկարությամբ: Սրբատաշ խոշոր բլոկներով ու կրաշաղախով իրականացված այս կառույցն ունեցել է զույգ հարավային ու հյուսիսային շքեղ շքամուտքեր, ատամնազարդ քիվ: Միանավ այս սրահը Անդրկովկասի համանման կառույցների մեջ աչ-

⁶⁵ Տեղեկությունները քաղվել են **Լ. Կիրակոսյանի** «Խաչենահովտի հուշարձանների ճարտարապետությունը» վերնագրով դոկտորական ատենախոսության սեղմագրից, Երևան, 2019:

քի է ընկնում իր մեծ չափերով, իդեալական սրբատաշ պատերով ու սալահատակով, ճարտարապետական հարուստ դեկորով: Այստեղ եղած «վաղքրիստոնեական հրապարակը» ներառում է երկու եկեղեցի, ստորգետնյա դամբարան, հուշակոթողի մնացորդներ, ընդարձակ գերեզմանաբակ և այլն: Փաստորեն այս բոլորը վկայում են, որ 5-7-րդ դարերում Տիգրանակերտը շատ խոշոր բնակավայր էր, և հրապարակը շատ մեծ տարածություն է զբաղեցրել⁶⁶:

Վաղքրիստոնեական դամբարանադաշտում պեղումները երևան բերեցին կանոնավոր շարքերով տեղադրված թաղումներ, որոնք, ինչպես ցույց են տալիս զուգահեռ ուսումնասիրությունները, իրենց կառուցվածքով և թաղման ծեսով նույնական են Ստեփանակերտի արվարձան Արմենավանի դամբարանադաշտի հետ: Այստեղ կատարվող պեղումների հաջողություններից մեկն էլ այս դամբարանադաշտի տարածքի մի բարձունքի վրա հայտնաբերված թևավոր խաչերի և խաչակալի քանդակազարդ մասերն են և այլն⁶⁷:

Այսպիսով, Արցախի Տիգրանակերտը մեկ միասնական մտահղացմամբ կառուցապատված հեղինիստական դիմագծով, կանաչի մեջ թաղված սպիտակ ու մեծ քաղաք էր, որ շարունակաբար գոյություն է ունեցել անտիկ, վաղքրիստոնեական և միջնադարյան ժամանակաշրջաններում՝ հասնելով մինչև նոր շրջանի սկիզբ: Միջնաբերդը (ամրոցը) ըստ էության հեղինիստական քաղաքների նմանությամբ հիմնադրվել է բնակավայրից որոշ հեռավորության վրա: Բերդաքաղաքը, փռված լինելով լեռան լանջին, ուրվագծով դարավանդաձև է, որտեղ պարիսպների առանձին հատվածներն իրար հետ կապվել են կլոր և քառանկյուն աշտարակներով, ինչպես նաև աստիճաններով ու ժայռափոր ջրանցքներով: Վաղքրիստոնեական ժամանակաշրջանում միջնաբերդից մինչև բերդաքաղաք եղած տարածքը

⁶⁶ <https://mediamax.am/am/news/special-report/18662/>.

⁶⁷ <http://www.tigranakert.am/city/>.

կառուցապատվել է ըստ ֆեոդալական բնակավայրերի ձևավորման առանձնահատկությունների, ինչպես նաև 5-8-րդ դարերում ընդլայնվել է բերդաքաղաքի շարունակության վրա: Տվյալ զարգացումն իր ակտիվ ժամանակաշրջանն է ունենում Խաչենի իշխանության 12-13-րդ դարերում:

Սա, լինելով բնակավայրերի զարգացման հայկական առանձնահատկություն, ընդգծված է նաև Տիգրանակերտի պեղումներով բացված համակառույցների և շենքերի շինարվեստում:

ՄԾՈՒՐՆ ԿԱՍ ՄԾՈՒՐՔ. Արածանիի տարածքի կարևոր անտիկ կենտրոններից էր, հատկապես ակտիվ է եղել I-II դդ.: Ցարդ հնագիտական տվյալները բացակայում են:

ՓԱՅՏԱԿԱՐԱՆ. վաղմիջնադարյան Հայաստանի՝ IV դ. առաջին կեսի կարևոր կենտրոններից մեկն է: Գոյություն ունենալով անտիկ դարերում՝ իր նշանակությունը չի կորցրել: Ենթադրվում է, որ հիշատակվող Տիգրանակերտներից երրորդն է և կոչվել է նաև Գարդմանքի Տիգրանակերտ:

ԵՐԻՉԱ ԱՎԱՆ (միջնադարյան Երզնկա, այժմ՝ Էրզինջան, նկ. 13): Հայաստանի հնագույն բնակավայրերից է: Անտիկ Հայաստանում ճանաչվել է նաև Անահիտական՝ որպես Անահիտ դիցուհու պաշտամունքի կարևորագույն կենտրոններից մեկը: Անահիտի տաճարի ավերակները ցարդ պահպանվել են Ոսկե բլուր (Ալթըն թեփե) ուրարտական սրբավայրի տարածքում⁶⁸, որը ցույց է տալիս քաղաքի անցումային զարգացումը Ուրարտուից դեպի հելլենիստական դարեր: Նշելու հանգամանք է, որ Բրիտանական թանգարանի՝ Անահիտի հայտնի դիմաքանդակը Երիզայից է⁶⁹: Թեկուզ քաղաքի հատակագիծն ու կառուցվածքը ուշմիջնադարյան տվյալներով հայտնի են, այնուամենայնիվ,

⁶⁸ **Altintepe:** <https://en.wikipedia.org/wiki/Altintepe>.

⁶⁹ Տե՛ս **C. Plinii Secundi**, *Naturalis Historie*, Tomus Primus, Apud Hachios, A*. 1669. Տե՛ս նաև Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բանարան, հտ. 2, Երևան, 1988, էջ 235, 236:

վայրը, երկրաշարժի գոտի լինելով, հաճախակի տեղափոխվել է, այնպես որ բնակավայրի վերաբերյալ քաղաքաշինական եզրահանգումներ կատարելը հավաստի չէ: Տեղում բացահայտված են անտիկ և միջնադարյան կառույցների հետքեր և բազմաթիվ բեկորներ ու դրամներ, որոնք վկայում են բնակավայրի առևտրական նշանակության մասին, որ զանազան փոփոխություններով անընդմեջ շարունակվել է մինչև միջնադար⁷⁰, ինչպես նաև 1915 թ. ցեղասպանության ժամանակներ ու հետո:

ՇԻՐԱԿԱՎԱՆ. գտնվում է Ախուրյանի ձախ ափին՝ նրա և Կարս գետի միախառնման տեղից 3 կմ հյուսիս: Բնակավայրը հնագիտական վիճակում է, այսինքն՝ տարածքն ամբողջությամբ հողածածկ է և ունի չորս հնագիտական շերտ՝ հիմնականում անտիկ ժամանակներից եկած: Առաջին հնագիտական շերտը վերաբերում է Ք.ա. II դ. առաջին կեսին, երկրորդը՝ երկրորդ կեսին, իսկ երրորդ շերտը՝ Ք.ա. I դ. սկզբից մինչև մ.թ. I դ.: Չորրորդ շերտը վերագրվում է վաղքրիստոնեական ժամանակներին և ընդգրկում է II-III դդ.: Հնավայրում հետքեր կան, որոնք ցույց են տալիս, որ IX դ. նույնպես այստեղ կյանքը որոշ ժամանակ գոյատևել է:

Շիրակավանը կազմված է իրարից առանձնացված երեք ագլոմերացիաներից⁷¹, որոնք դասավորված են տարածքով անցնող գետահովտի հյուսիսարևելյան և հարավարևմտյան դարավանդների վրա: Դրանք միասնաբար կազմում են 6 հա տարածություն: Հյուսիսարևմտյան կողմում գոյություն ունի նաև դամբարանադաշտ: Կառույցներն ուղղանկյունաձև են ու հստակորեն տեղադրված աշխարհի 4 կողմերի նկատմամբ: Ելնելով խարիսխների առանձնահատկություններից՝ բնակավայրի ճար-

⁷⁰ Տե՛ս **Ibn Batuta**, The travels of Ibn batuta, Berkley Orias a virtual journey: see 1330-1331 Anatolia, part of Erzingan: orias.berkeley.edu/resources-teachers/travels-ibn Battuta.

⁷¹ Ագլոմերացիաները քաղաքային և գյուղական բնակավայրեր էին մեծ քաղաքի շուրջը, որոնք իրար միացած էին արտադրական, տրանսպորտային, մշակութային սերտ կապերով:

տարապետությունը պետք է զուգահեռ լիներ արևելյան հելլենիստական մշակույթին: Պեղումների նյութերը ցույց են տալիս, որ Շիրակավանը Ք.ա. II դ. կեսերին հրկիզվել է:

Ք.ա. II դ. երկրորդ կեսին Շիրակավանը վերակառուցվում է նախորդ շրջանում հրկիզված շինությունների հաշվին: Այդ ժամանակներում հայտնաբերված կառույցների մեջ ուշագրավ է 2.5 x 3 մ սրբարանի առկայությունը, որը նույնպես ունի աշխարհի 4 կողմերի նկատմամբ տեղադրում: Կառույցի մուտքը հարավային կողմում է, իսկ զոհասեղանը՝ արևմտյան: Սրբարանի շուրջը կան կարասային թաղումներ: Շիրակավանն իր առավելագույն ծաղկումն է ապրել Ք.ա. առաջին դարում: Բնակավայրն ակնհայտորեն ընդարձակվել է: Երկրորդ պեղավայրի նյութերը հստակորեն ցույց են տալիս Շիրակավանի՝ կանոնավոր հատակագծման սկզբունքով կառուցապատված լինելը: Դրա մասին է վկայում տարածքում եղած 10 x 20 մ չափերի հասնող հրապարակն իր սրբավայրի հետ: Շրջակա բնակարաններն ունեն բակաձև հորինվածք, իսկ տաճարի պատերը մշակվել են կենդանական զարդանախշերով: Բնակավայրի հյուսիսային հատվածն ունեցել է իշխող դիրք և նշանակություն: Վերջինն ապացուցում է նաև նույն տարածքի՝ I դ. շերտում հայտնաբերված 100 քմ տարածությամբ կառույցի առկայությունը, որը, հավանաբար, պալատ էր: Համալիրում եղել է 16, 5 x 12 մ չափերի հասնող, համապատասխանաբար հյուսիսից հարավ և արևելքից արևմուտք ձգվող սյունազարդ դահլիճ: Դահլիճի կենտրոնում պահպանվել են չորս մեծ չափի սյան խառիսներ: Պեղումները կատարող մասնագետները կարծում են, որ սա Հայկական լեռնաշխարհում յայն տարածում ունեցած դահլիճների ժառանգության շարունակությունն է, որի օրինակները կային դեռևս ուրարտական քաղաքներում և հաջորդաբար անցել են անտիկ ժամանակներ:

ԱՐՏԱՄԵՏ (նկ. 14): Եթե Վանը Վասպուրականի ուրարտական շրջանի քաղաքաշինական մեծագործությունն է, Արտամետը հայկական հելլենիստական քաղաքաշինության Վասպուրականի անզուգական օրինակն է: Թովմա Արծրունու և Անանունի «Պատմություն տանն Արծրունյաց» գրքում, որի աղբյուր-

ները նաև անտիկ հեղինակներ են, մանրամասն նկարագրվում է քաղաքի հիմնադրումը Արտաշես Ա թագավորի կողմից: Սա հայկական հելլենիզմի քաղաքաշինության անփոխարինելի փաստաթղթերից մեկն է, որն իր արժեքով համագոր է նույն հեղինակների՝ Աղթամարի տաճարի և պալատի նկարագրությանը հայկական մատենագրության էջերում: Արտամետը (Արտամատը, ներկայիս էդրեմիտը) Վանա լճի առափնյա գեղատեսիլ բարձունք է, որ մինչև օրս գոյատևում է որպես փոքր բնակավայր: Այն գտնվում է Վանա լճի ափին՝ Վան քաղաքի հարավ-արևմուտքում՝ 17 կմ հեռավորության վրա: Հեթանոսական շրջանում քաղաքը հայտնի է եղել որպես հայոց Անահիտ աստվածուհու մեհենատեղի: Արծրունի պատմիչը հաղորդում է, որ «Արտամետը ծիծաղախինդ բարձունք էր առընթեր՝ բարձրագագաթ, ձյունապատ ու սպիտակափառ Մասիք (Սիփան) լեռան... դրանց միջև ծփում էր կապուտակ՝ ծիրանագույն դաշտի նմանվող ծովը (Արքան): Լճափի շուրջը պատեց սաղարթախիտ ծառերով, խաղողի որթերով ու զանազան պտղատու ընդարձակ այգիներով: Այստեղ Արտաշեսը կառուցեց բազմաթիվ շենքեր, ամրոց և նրա շուրջը ծառաշատ, բազմապիսի ծաղիկների անուշ բույրով լցված ծաղկավետ բուրաստան: Այն ոչ միայն ակորժելի է աչքին և հաճելի հոտոտելիքին, այլև դեղեր պատրաստելու համար՝ համաձայն Եսկուլապի բժշկական հնարիմաստ վարդապետության: Թագավորը ողջ բլուրը շուրջանակի պատեց ամուր և ապառաժ սրբատաշ քարերից շինված բերդանման ապարանքներով, հովիտը շենացրեց, դարձրեց ամեն տեսակ բարիքներով լի քաղաք, որի վերևում աղբյուրն էր ցայտում: Ապահովության համար ամուր, անմատչելի պարիսպներով պատեց նաև ջրի քարաբլուրը: Ծովի խորության մեջ գցեց երկար պարիսպներ: Իսկ երեք մասի ճյուղավորված փոքր ու գոգաձև հովտում, որ սկսվում է երեք բլուրներից, փորվածքի միջոցով կառուցեց բարձրաբերձ աշտարակ և նրա վրա կանգնեցրեց Աստղիկի պատկերը (քանդակը), իսկ մոտակայքում՝ գանձա-

տուն: Նույն տեղում հիմնեց ամեն տեսակի բարիքներով լեցուն ու հարմարավետ վաճառափողոցներ: ...Ապա, ի բավականություն աչքերի տեսողության, դաշտավայրի արևմտյան կողմում և ծովեզերքին ստեղծեց պարսպապատված ու գոգավոր տարածություն, այն պատեց ծառաշատ ու վայելչատես այգիներով: Կառուցեց անմատչելի և ապահով մի ամրոց, որն անվանեց «Զարդ»: Արտաշեսը տիկին Սաթենիկին ամուսնն ու աշնանը այստեղ բերեց՝ զբոսնելու բերդի գեղեցկաշեն ու զարդարված ապարանքներում: Իսկ քաղաքի անունը կոչեց «Արտամետ», որ թարգմանվում է «Արտաշեսի ձեռակերտ»⁷²:

Արծրունի պատմիչի հաղորդումից կարելի է եզրահանգել, որ Արտամետը կազմված էր բարձունքին տեղադրված ամրոցից, թագավորների և ազնվականների ապարանքների համալիրից և մի փոքր հեռու՝ ձորամեջում, գտնվող բնակելի թաղամասերից: Նշվածներն ամբողջությամբ, պարագծով մեկ ամրացված լինելով, լճափի կողմից պարիսպներով խորանում էին մինչև լճի ալիքները: Քաղաքն ունեցել է առանձին պարսպապատ տարածք բնակավայրը ջրով մատակարարող ակի համար: Լճափին տեղաբաշխված էին սոսյաց անտառը, գոգաձև ամբարտակ և այլ ջրամատակարարման հարմարություններ: Թագավորի ապարանքն ուներ ուրույն պարիսպներ, որոնք դեպի լիճը բացվող կողմում համադրված էին ճեմասրահներով, միաժամանակ օղակավորելով ողջ անտառապատ տարածքները: Անտառային գոտուց ներքև մյուս դղյակներն էին: Այստեղից (իմա՝ ագորայից - Դ.Ք.) սկսվող փողոցների ցանցը եռակի ճյուղավորմամբ տարածվում էր դեպի քաղաքի դարպասները: Երեք փողոցների հանգույցում տեղադրված էր Աստղիկ Աստվածուհու՝ աշտարակի վրա տեղադրված քանդակը: Աստվածուհու հովանավորության ներքո տեղադրվել էին քաղաքի գանձատները, բարիք-

⁷² Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, Պատմություն տանն Արծրունյաց ներածությունը, թարգմանությունը և ծանոթագրությունները՝ **Վարդանյան Վ.**, Երևան, 1978, էջ 74, 75:

ներով լի վաճառատներն ու արհեստանոցները և այլն:

Ինչպես ցույց են տալիս ճանապարհորդական նկարագրությունները, Արտամետն ուշ միջնադարում դեռևս պահպանում էր անտիկ ժամանակների կառուցվածքը: Տեղագրող Մանվել Միրախորյանի նկարագրությամբ բնակավայրը կազմված էր դեպի լճափ նայող ապառաժոտ եռանկյունաձև բարձունքից և նրա շուրջը ծավալվող անտառախիտ թաղամասերից, որոնք գոտենման շարունակվում էին դեպի քաղաքի արևելյան կողմը երկարող ձորահովիտ⁷³: Արտամետի տեղագրական նյութերի համեմատական ուսումնասիրությունից պարզվում է, որ նշված եռանկյունաձև ապառաժը պալատի և ազնվականաց ապարանքների վայրն էր: Ինչպես նշում է Միրախորյանը. «Ապառաժի առաջին անկյունը «բերդ» կկոչվի, ոյր վերա հանուն Սբ Սարգիս զորավարին կա շինած անգոր մի մատուռ փոքրիկ: Երկրորդ անկյունը «Տեր Հուսկան որդվո պառեկ» կանվանեն... Սբ Սարգիսից երկու քարընկեց հեռու քաղաքի հին գերեզմանատունն է: Վերևում նշված «ժայռի» հաջորդ՝ հարավարևմտյան անկյունն անմիջապես կախվում է լճի վրա.., ահա այստեղ կառուցյալ է այժմյան եկեղեցին՝ Սբ Աստվածածինը.. Արտամետում կան նաև այլ եկեղեցիներ, «ինչպես նաև կան բազմաթիվ բևեռագիր արձանագրություններ և այլն»⁷⁴:

Գ. ՀԱՅԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱԴԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՀՈՒՄԵԱ-ՊԱՐԹԵՎԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՐԵՐՈՒՄ

«Հայաստանում մեր թվականության սկզբներին վերականգնվել են որոշ հին քաղաքներ և կառուցվել նորերը: Մ.թ. I դ. կեսերին՝ հայոց Տրդատ Ա թագավորի ժամանակ, վերականգնվել է հին մայրաքաղաք Արտաշատը: I-II դդ. ընթացքում կա-

⁷³ Միրախորյան Մ., Նկարագրական ուղևորություն ի հայաբնակ գավառս Տաճկահայաստանի, հտ. 2, Կ. Պոլիս, 1884, էջ 230:

⁷⁴ Անդ, էջ 231-234:

ռուցվել են Մծուրնը «Մծուրք»՝ Մեծ Հայքի Տուրուբերան նահանգի Տարոն գավառում Սանատրուկ Ա թագավորի ժամանակ՝ 100-110 թթ.), ապա Վաղարշապատը՝ Արարատյան դաշտի կենտրոնում՝ Վարդգեսավանի տեղում, «Սանատրուկին հաջորդած Վաղարշակի օրոք՝ 117-140 թթ.»⁷⁵:

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ԿԱՍ ՆՈՐ ՔԱՂԱՔ (նկ. 15): Վաղարշապատը Հայաստանում հիմնադրված վերջին անտիկ քաղաքն էր: Ինչպես նշում է Մովսես Խորենացին, քաղաքը գտնվել է Շրեշ բլրի վրա⁷⁶, որտեղ 1933 թ. մասնակի պեղումներ են կատարվել: Քաղաքը գտնվում էր այն հարթավայրում, որտեղ ներկայիս Էջմիածինն է՝ իր այգիներով ու դաշտերով: Վաղարշապատի անառիկությունը պայմանավորված էր նրա պաշտպանական համակարգով: Պարսպապատերի, հողապատնեշների ու խանդակների գոյության մասին տեղեկություններ կան Պատմահոր երկում և այլ աղբյուրներում: Վաղարշապատը հռոմեացիների կարճատև տիրապետության ժամանակ՝ 163 թ., հռչակվեց Հայաստանի «առաջին քաղաք» կամ մայրաքաղաք⁷⁷: Հռոմեական կայսրի շինարարական գործունեությունը ծավալվել է Մարկիոս Վերոսի կողմից Արտաշատն ավերվելուց և հայերի ապստամբությունը ճնշվելուց անմիջապես հետո և տևել մինչև 185 թ.⁷⁸: Ըստ Ագաթանգեղոսի նկարագրության՝ Տրդատ Գ-ի ապարանքը, որի սենյակներից մեկում բանտարկված էր Հռիփսիմե կույսը, գտնվում էր պարիսպների համակարգով շրջապատված միջնաբերդում: Պատմիչը հայտնում է նաև, որ միջնաբերդում, բացի պալատից, կային փողոցներ («ի փողոցս ի ներքսագոյնս»): Ժողովուրդը, որը հավաքված էր Տրդատի և Հռիփսիմեի պսակադրության առիթով, մասամբ գտնվում էր ներքին փողոցներում, մասամբ՝

⁷⁵ Տե՛ս **Հարությունյան Վ.**, Հայկական քաղաքաշինության և ճարտարապետության տեսության և պատմության հիմնախնդիրներ, էջ 43:

⁷⁶ **Մովսես Խորենացի**, Հայոց պատմություն, էջ 199:

⁷⁷ **Մանանդյան Հ.**, Երկեր, հ. 2, Երևան, 1985, էջ 84:

⁷⁸ **Тревер К.В.** Очерки по истории культуры Древней Армении, М.-Л., 1953, стр. 251-270.

միջնաբերդում («բերդամիջին»), մասամբ էլ՝ բուն քաղաքում («քաղաքամէջն»)⁷⁹: Վաղարշապատի միջնաբերդը կամ, ինչպես Ագաթանգեղոսն է անվանում՝ բերդը, տարբերվում էր Արմավիրի, Արտաշատի ու Հին Հայաստանի այլ քաղաքների միջնաբերդերից նրանով, որ տեղանքի պայմանների բերումով չէր կարող գտնվել բարձր տեղում, ուստի սփռված էր քաղաքի համեմատաբար հարթ մասում: Պարիսպներում դեպի առևտրական ճանապարհները բացվող դարպասներ կային: Ագաթանգեղոսը հիշատակում է միայն երկուսը, սակայն իրականում դրանց թիվը շատ էր: Դարպասներից մեկը, որ գտնվում էր քաղաքի արևելյան կողմում, ըստ պատմիչի, կոչվում էր «Արեգ դուռն քաղաքի»: Արտաշատ տանող մայրուղին անցնում էր այն ավազոտ բարձունքի կողքով («ի սարաւանդակ, ի բարձրաւանդակ յավազին տեղի մի»)⁸⁰, որն, անկասկած, համապատասխանում է Հռիփսիմեի տաճարի այժմյան տարածքին: Մյուս դարպասը գտնվում էր քաղաքի հարավային մասում և բացվում էր դեպի այն ճանապարհը, որն անցնում էր Մեծամոր գետի կամրջով: Հարավային կողմից քաղաքը պաշտպանված էր Մեծամորի ջրով լցվող խոր խանդակով: Այդ ճահճուտ շերտը պատմիչն անվանում է «պարկէն փոս», որը պտտվում էր քաղաքի շուրջը («շուրջ զայր զքաղաքաւն») և կարևոր դեր էր կատարում քաղաքի պաշտպանական համակարգում⁸¹ և այլն:

Վաղարշապատը Արարատյան դաշտի մյուս քաղաքների նման պարսպապատ էր, ինչպես նաև շուրջն ուներ պաշտպանական բլուրների համակարգ, որն ուրարտական քաղաքաշինական ակունքներից էր: Միջնաբերդը կարելի է նույնացնել Մայրավանքի տարածքի հետ: Միջնաբերդի և նկարագրված պարսպապատ քաղաքի միջև ագորան էր կամ առևտրի հրապարակը, որ մինչև ուշ միջնադար իր նշանակությունը չէր

⁷⁹ Ագաթանգեղոս, նշվ. աշխ., ԺԷ, 180:

⁸⁰ Անդ, 192:

⁸¹ Անդ, ԺԹ, 206:

կորցրել: Փաստորեն Վաղարշապատն ուներ հելլենիստական, հունա-հռոմեական քաղաքաշինական և ճարտարապետական առանձնահատկություններ: Եղած բազմաթիվ ուշագրավ զուգահեռներից կարելի է հատկապես նշել հռոմեական Աթենքը, ինչպես նաև Կոզա անունը կրող Հռոմի մերձակա ճամբարային քաղաքը (մ.թ.ա. 273 թ.):

ԳԱՌՆԻ (նկ. 16, 16.1 և 16.2): Հին Հայաստանի քաղաքների շարքում թագավորանիստ բնակավայր է: Որքան էլ այն անտիկ մասով սահմանափակվում է ամրոցով, այնուամենայնիվ առավել հարուստ նյութ է տալիս Հայաստանի հելլենիստական շրջանի մշակույթի ու ճարտարապետության մասին, քան մյուս քաղաքներն ու հայտնի հուշարձանատարածքները: Գառնիի մասին կան ուրարտական⁸², անտիկ ժամանակների զանազան փաստացի տեղեկություններ⁸³, ինչպես նաև ճանապարհորդական բազմաթիվ հետազոտություններ: 1909 թ. ի վեր այստեղ գործել են բազմաթիվ արշավախմբեր, որոնց ուսումնասիրությունների արդյունքները հրատարակվել են⁸⁴: Գառնիի տաճարը վերականգնվել է 1970-ական թվականներին:

Մովսես Խորենացին, Գառնիի ամրոցի կառուցումը վերագրելով Տրդատ Գ-ին (287-330), նկարագրում է, թե ինչպես տաշած որձաքարերով ու դրանց ագուցված երկաթե գամերով և

⁸² **Саян А.** Архитектура античных сооружений Гарни, Ереван, 1988, стр. 12. Տե՛ս հեթանոսական տաճարից ոչ հեռու 1963 թ. հայտնաբերված Արգիշտի Ա-ի սեպագիր արձանագրությունը:

⁸³ Տե՛ս **Publius Cornelius Tacitus**, Annals, Nero, Book 16. Հմմտ. Օտար աղբյուրները Հայաստանի մասին, 3. Լատինական աղբյուրներ, Տակիտոս, «Տարեգրություններ», Երևան, 1941, էջ 78:


⁸⁴ Գառնիի վերաբերյալ տե՛ս **Մանանդյան Հ.**, Գառնիի հունարեն արձանագրությունը և Գառնիի հեթանոսական տաճարի կառուցման ժամանակը, Երևան, 1946-48; Գարնի I, **Аракелян Б.** Результаты работы Гарнийской археологической экспедиции Института истории АН Арм. ССР, Ереван, 1950; Գարնի II, **Аракелян Б.** Результаты работы Гарнийской археологической экспедиции 1954-55 гг. (античный период), Ереван, 1957; **Սահինյան Ա.**, Գառնիի անտիկ կառույցների ճարտարապետությունը, Երևան, 1983 և այլն:

կապարով կառուցում են շինությունը՝ զարդարելով այն արձաններով, դրվագներով ու բարձրաքանդակներով. «Ձայսու ժամանակաւ կատարէ Տրդատ զշինուած ամրոցին Գառնոյ, զոր որձաքար և կոփածոյ վիմօք, երկաթագամ և կապարով մածուցեալ, յորում շինեալ և տուն հովանոց, մահարձանօք, սքանչելի դրօշմածովք, բարձր քանդակաւ, ի համար քեռ իւրոյ Խոսրովիդիստոյ, և գրեալ ի նմա զյիշատակ իւր հելլենացի գրերով»⁸⁵: Իրականում պատմական փաստ է, որ Գառնին կառուցվել է Տրդատ Ա արքայի կողմից: Ինչպես ցույց են տալիս պատմական տեղեկությունները, հռոմեացի զորավար Գ.Դ. Կորբուլոնը 55-63 թթ. պարսկական և հռոմեական ընդհարումների ընթացքում գրավել ու ավերել էր Արտաշատը, Գառնին, Տիգրանակերտը և այլ բնակավայրեր: Սակայն Տրդատ Ա-ն, ենթակայություն հայտնելով Հռոմին, իր թագը ստանում է Ներոնից, ինչպես նաև նվիրատվական փոխհատուցում Ներոնից: 66 թ. վերադառնալով Հայաստան՝ նա հայ և փոքրասիացի վարպետների օգնությամբ կառուցում է Գառնիի հեթանոսական տաճարը և վերակառուցում ամրոցը⁸⁶:

Գառնիի ամրոցը տեղադրված է եռանկյունաձև գեղանիստ մի հրվանդանի վրա, որի կողմերի մոտավոր չափերը 180 x 800 x 300 մ են: Հյուսիսարևմտյան մասը հարակից է այն ընդարձակ սարահարթին, որի վրա ժամանակին սփռված էր քաղաքատիպ բնակավայրը, իսկ այժմ՝ Գառնի գյուղը: Ամրոցը պարիսպներով պաշտպանված էր նշված սարահարթին հարող, ինչպես նաև արևելյան և արևմտյան խոցելի կողմերից՝ ապահովելով անառիկությունն այդ հատվածներում: Մինչդեռ հրվանդանի հարավային կողմը, եզերված լինելով խոր ծորով, ունի բնականոն պաշտպանվածություն: Գառնիի ամրոցի ներդաշնակության տարրերը պարփակում են տաճարի առաջ տարածվող հրա-

⁸⁵ Մովսես Խորենացի, նշվ. աշխ., էջ 241:

⁸⁶ Տե՛ս Հարությունյան Վ., Հայկական քաղաքաշինության և ճարտարապետության տեսության և պատմության հիմնախնդիրներ, էջ 47:



Նկ.1- Քարտեզ, Հայկական կայսրությունը Տիգրան Մեծի օրոք




Նկ.2- Էրեբունի ամրոցի ետ-ուրարտական տաճարները



Նկ.3- Անի-Կամախ. Հին ամրոցը



Նկ.3.1- Արշակունիների պանթեոնը Անի-Կամախի ամրոցի տարածքում



Նկ.4- Վան քաղաքի հայ բնակչության տարածքների հետքերը մինչև 1915թ.



Նկ.4.1- Վան քաղաքի մերձակայքում հայտնաբերված անտիկ սարգոֆագ. 2018 թ. համացանցի լուսանկար



Նկ.7- Արշամաշատ հայկական հելլենիստական մայրաքաղաք. Ք.ա. 3-1-ին դդ.




Նկ.7.1- Արշամաշատ. այլ անտիկ նյութեր տարածքից



Նկ.9.1- Արտաշատ երկրորդ բլրի վերակազմությունը ըստ Ֆրենք Դեեջանի




Նկ.9.2- Արտաշատ բաղնիք և տերմեր ըստ արշավախմբի արդյունքների:
Հոնիական տաճարի վերակազմությունը ըստ Գևորգ Գյուլամիրյանի



Մարցո Պոտտո. Էդրուրիա Ք.ա. 500 թ.





Հռոմեական քվադրալ քաղաքների օրինակ




Զարնակի բլուր (թեփե). Արձեշ (Էրճիշ) Վանա լճի հյուսիսային ափ. Տեղանքը Բուռնեյի և Լոուսոնի կողմից համարվել է ուրարտական

Նկ.10- Զարիշատ (Զարնակի), բնակավայրին հարակից չբնակեցված կացարանների համեմատական ուսումնասիրությունը




Մայրաքաղաք Տիգրանակերտի հատակագծային սխեման ըստ Ջ.Թեյլորի 1859թ.

Նկ.11- Մայրաքաղաք Տիգրանակերտ. վիրտուալ վերակազմություն



Նկ.11.1- Մայրաքաղաք Տիգրանակերտի տարածքի քարտեզ ըստ Հ.Քիեպերտի



Նկ.12- Արցախի Տիգրանակերտի պեղումների հենակետային հատակագիծը



Նկ.12.1- Արցախի Տիգրանակերտի ամրացված առաջին թաղամասի պարիսպներից հատված



Նկ.12.2- Արցախի Տիգրանակերտի Կենտրոնական հրապարակից պեղված տարածք ըստ արշավախմբի



Նկ.12.3- Արցախի Տիգրանակերտի Կենտրոնական հրապարակից պեղված տարածք ըստ արշավախմբի




Նկ.13- Երեզավան, Ոսկե բլուրի պեղումներից Անահիտի մեծյանի տեղը և դիմաքանդակը




Ardanad/Edremit Van iliğın ilçesidir, 1914'te burada 720 Ermeni yaşıyordu .Edremit kalesi kral Ardaşes tarafından inşa edilmiştir


Նկ.14- Արտամետ (Էդրեմիտ) քաղաքի տարածքում մնացած հին հատված




Նկ.15- Վաղարշապատ քաղաքը հունահռոմեական զուգահեռներով



Նկ.16 Գաննի. դղյակ և պարիսպներ



Նկ.16.1- Գաննի հեթանոսական տաճար՝ ճակատ, հատակագիծ, կտրվածք




1, 2, 3, 4, 5 Գառնիի դղյակի շենքերի դասավորությունը
(տես նկ.16-ը) և պալատական բաղնիքի կտրվածքը



Նկ. 16.3- Գառնի առաստաղի մանրամաս



Նկ. 17- Արտաշատ-Տիգրանակերտ մայրուղի



Նկ. 18- Նեմրութ սարի Անտիոքոս Երվանդունու կառուցած տոհմական մեմորիալը

պարակը՝ որպես հորինվածքի կենտրոն, հիերարխիան է հրապարակի վերջում տեղադրված հեթանոսական տաճարը, իսկ հորինվածքային առանցքն է ամրոցի դարպասից դեպի տաճարն ուղղված դիտելիությունը:

Գառնիի պարիսպներն ունեն ինքնատիպ կերպար, դրանց ընդհանուր երկարությունը կազմում է 314 մ: Դրանք 170-ը հյուսիս-արևմտյան, իսկ 144-ը հյուսիսարևելյան կողմերից շրջափակում էին ամրոցի ընդհանուր պարագծի 2/3 մասը: Սարահարթին հարող հատվածի հյուսիսային կողմում է 2,18 մ լայնությամբ դարպասը: Ողջ պարսպապատը կառուցված է բազալտե խոշոր, կանոնավոր ձև ունեցող քարերից, որոնք սեղմ հպված են միմյանց ու կապակցված են երկաթե ձողերով: Դրանց ծայրերը երկու կողմից ամրացված են քարերի մեջ, իսկ բները լիցքավորված են հալած արճիճով: Քարի ստորին շարքերի բարձրությունը 2 մետրից ավելի է: Մեծաչափ, լավ մշակված քարերից յուրաքանչյուրի քաշը կազմում է 5-6 տոննա: Պեղված տեղերում գտնվել են երկաթե գործիքներ, որոնցով մշակել են քարերը: Պարիսպների պարագիծը հարմարեցված է տեղանքին՝ կազմելով ոչ թե կորագիծ, այլ բեկյալ գծերից համադրված աղեղ, անկյուններում՝ դրսի կողմը դարձված ուղղանկյուն՝ 6-8 մ չափերի աշտարակներով: Ուղղանկյուն այդ աշտարակներն ունեին ավելի պաշտպանական, քան կառուցողական նշանակություն, որովհետև դրանց միջև տարածությունը հյուսիսարևմտյան հատվածում 10-12 մ է, իսկ հյուսիսարևելյանում՝ 26-32 մ: Ինչպես մուտքը, այնպես էլ աշտարակներն ունեն շուրջ 10-12 մ բարձրություն: Պարիսպները ներսի կողմից ունեցել են քարակերտ աստիճաններ՝ պարսպի վերին հարթակ բարձրանալու համար: Նետածգության պահանջներով պայմանավորված՝ պարիսպները վերևում մեկընդմեջ դատարկ ատամնավոր ուրվագիծ ունեն:

Գառնիի տաճարն իր տեղադրությամբ և ընդգծված սիմետրիայի առանցքով հավասարակշռության մեջ է դնում շրջակա բնությունն ու արևմտյան կողմում կորագծային դասավորու-

թյուն ունեցող պալատական համալիրը: Դղյակի համալիրի կազմում են հեթանոսական տաճարը (I դ.), պալատական դահլիճը (կառուցման թվականը հայտնի չէ), պալատի մնացորդները (III դ.), բաղնիքը (III դարի վերջ), քառաբսիդ կլոր տաճարը միանավ մեմորիալի հետ (VII դ.), կայազորի զորանոցը և այլն: Գառնիի համալիրը վերականգնող ճարտարապետի՝ Ա.Սահինյանի⁸⁷ վերակազմությամբ պալատական դահլիճը երկնեֆ թաղակապ բազիլիկ է, երկարությունը՝ 11.5 մ, լայնությունը՝ 7 մ, 7 մ է նաև շենքի բարձրությունը: Ինչ վերաբերում է պալատական մասին, այն կազմված է զանազան սենյակների և դահլիճի համադրումից: Ճարտարապետականորեն ուշագրավ կառույց է պալատի բաղնիքը, որ բացվել է 1953-1954 թթ. պեղումներով: Շենքը պալատական օգտագործման կենցաղային կառույց է, որ ընդգրկում է իրար մեջ բացվող 4 հաջորդական սենյակներ: Նախասրահին հաջորդող սենյակի հատակին կա 2,9 x 2,9 մ չափերի հին հունական ծովային դիցաբանության թեմայով խճանկար՝ հունարեն արձանագրությամբ: Մյուս սենյակների հատակները մայր գետնից 70 սմ բարձրությամբ կտրված են հատակից 20 սմ տրամագիծ ունեցող հիպոգաուստիկ սյունիկներով: Փաստորեն հատակը տաքացվում էր վառարանային մասից մղվող գոլորշու միջոցով:

Գառնիի դղյակի ամենակարևոր շենքը Միիր աստծուն նվիրված հեթանոսական տաճարն է: Այն հռոմեական օրդերներով հունա-հռոմեական պերիպտերոս է, ճակատային 6 և կողային 8 սյուներով: Սյուների կամ օրդերների ընդհանուր քանակությունը 24-ն է: Տաճարի ընդհանուր չափերն են՝ 11.5 x 15.5 մ:

Տաճարը հատակագծում կազմված է 2.6 մ բարձրությամբ պատվանդանից, սյան և ցելլայի միջև անցնող շրջանցիկ միջանցքից, հյուսիսային պրոնաոսից, դարպասից և շուրջ 40 քմ մակերեսով դահլիճից: Դահլիճի վերջում՝ հատակից ցածր, կրա-

⁸⁷ Հիմնականում տեղեկությունները քաղվել են Ա. Սահինյանի՝ վերնում նշված աշխատությունից, տե՛ս էջ 24-53:

կի փոսն է, որի ետևում բազինն է, իսկ վերևում՝ երդիկը: Տաճարի պատվանդանը մուտքային կողմում կազմված է 9 աստիճաններից, յուրաքանչյուրը 30 սմ: Աստիճանների երկու կողմերում կողային պահուսնակներն են, որոնց վրա նշմարելի են շենքը բարձրացնող ատլանտների բարձրաքանդակները: Դահլիճը ընդհանուր առմամբ թաղնկապ է: Շրջանցիկ միջանցքի առաստաղը պրոնաոսով հանդերձ քանդակազարդ է՝ համապատասխան անտիկ մոդուլային հարդարանքներով: Նույնպիսի մշակում ունի տաճարի ցեղայի մուտքը: Ցեղայի ներքին բարձրությունը շուրջ 8 մ է:

Ընդհանուր առմամբ Գառնիի տաճարը ծավալատարածականորեն երկթեք կտուրով անտիկ բազիլիկա է: Ճակատները դասական եռամաս համամասնությամբ են. վերևում ճակտոնավոր տանիքն է համապատասխան էկլոտերիոններով, մեջտեղում սյունաշարն է և ստորին մասում՝ պատվանդանը: Ուշագրավ զարդարվեստ ունի ճակտոնը և տանիքը միացնող կառնիճային մասը, որ եղանակավորող դեր ունի տաճարի ընդհանուր կերպարի ստեղծման գործում: Ընդ որում Գառնիի տաճարի զարդամոտիվները նկատելի նմանություն ունեն լիբանանյան Բաալբեկի տաճարի հետ:

Ողջ տաճարը կառուցված է տեղական մանրահատիկ մոխրակապտագույն քարերով, որով կառուցված են նաև պարիսպները: Դրանց շարվածքում կիրառված է հունահելլենիստական տեխնիկան: Տաճարի պատվանդանի, ցեղայի, սյուների և մյուս մասերում քարերը միմյանց ագուցված են երկաթե ծիծեռնակապոչ պահանգներով, բներում՝ արճի լիցքով: Կրաշաղախն այստեղ օգտագործվել է միայն հիմքերի լիցքավորման համար: Տրամատավոր բոլոր տարրերի՝ բարձր հարթակի (պոդիում) քիվի, սյունասրահի առաստաղի, սյուների խարիսխների ու խոյակների, ախավեղագեսի (անտաբլեմենտ), ճակտոնի, տաճարի առաստաղի մշակումները կատարված են բացառիկ նրբությամբ, քարագործության բարձր որակով: Այս տեսակետից առանձնապես

աչքի է ընկնում սյուներից վեր գտնվող ծոփոր կոչված քանդակազարդ գոտին: Նշելու հանգամանք է, որ տաճարը, կառուցված լինելով բազալտից (կարծր քարից), ունի համաչափական կոմպակտ չափեր և առանց կանելուների սահուն էնտազիս, ի տարբերություն կրաքարից իրականացված միջազգային օրինակների, դրանով իսկ Գառնին իր համաչափություններով ուրարտական Մուսասիրի տաճարի ժառանգորդն է:

ՆԵՄՐՈՒԹ ՍԱՐԻ ՀԱՄԱԼԻՐ (նկ. 18): Հին աշխարհի հրաշալիքներից մեկը համարվելու հավակնությունն ունի: Տեղանքը ծ.մ. 2134 մ բարձրությամբ լեռ է Տավրոսի լեռնաշղթայում, հնագույն Կոմմագենե երկրում: XIX դ. Նեմրութ լեռան վրա հայտնաբերված է Կոմմագենեի Անտիոքոս Ա Երվանդունի թագավորի (Ք.ա. 69–34 թթ.) կառուցած դամբարանաբլուր-սրբավայրը, որի արևելյան և արևմտյան կողմերի արհեստական հարթակներին դրված են արձաններ և բարձրաքանդակներով ու արձանագրություններով այլ կոթողներ: Դեպի հարթակներ տանող սալահատակ ճանապարհը նախատեսված է տոնական շքերթների համար: Արձանները, որոնց պատվանդանի բարձրությունը հասնում է մինչև 8 մ-ի, կառուցված են կրաքարե խոշոր վեմերով, և դրանց վրա տեղադրված են Կոմմագենե երկրի աստվածների ու գահին բազմած Անտիոքոս Ա-ի մեծ քանդակները: Քանդակային ուղղագիծ շարքի մեջտեղում Արամազդի արձանն է, որի մի կողմում դրված են Միհրի և Արտագնեսի, մյուս կողմում՝ Կոմմագենե երկրի դիցուհու և Անտիոքոս Ա-ի արձանները: Թագավորը պատկերված է հայկական՝ տիգրանյան թագով: Հարթակների երկու կողմերի պատվանդաններին բարձրացող ուղղանկյուն խոշոր սալերի վրա քանդակված են թագավորի նախնիների պատկերները՝ 4 հունարեն արձանագրություններով հանդերձ, ինչպես նաև թագավորի ողջագուրման տեսարանները Արամազդի, Միհր-Արեգի ու Արտագնեսի հետ:

Համալիրը կազմված է 50 մ բարձրությամբ և 150 մ տրա-

մագծով դամբարանաբլրից: Տեղանքն ունի երկու մուտք՝ հարավարևմտյան և արևելյան կողմերից, որոնք ծիսական ճանապարհների ավարտին են: Արևմտյանը գլխավորն է, որ լուծված է սյունասրահային մուտքի ձևով (հիպոստիլ): Արևելյան մուտքը շարունակվում է դեպի հյուսիս և ձևավորում հուշարձանախմբի համապատասխան հարթակը, որը, ըստ երևոյթին, զոհաբերությունների համար էր: Փաստորեն արևմտյան և արևելյան մուտքերի առջև բարձրադիր տեղադրությամբ դասավորված են վերը նշված քանդակաշարքերը: Բնականաբար նկարագրվածը հեթանոսական տաճարների կանոնիկ դասավորությամբ է, եթե համեմատելու լինենք Գառնիի տաճարի հետ, այստեղ մուտքերը կողային կողմերից են:

Գահավորակների թիկունքին Անտիոքոս Ա-ը փորագրել է տվել հունարեն մեծ արձանագրություն, որտեղ հիմնավորվում է դամբարան-սրբավայրի կառուցման անհրաժեշտությունը, ազդարարվում Անտիոքոսի նախնիների պաշտամունքի ստեղծումը և թվարկվում դրա հետ կապված միջոցառումները: Արձանագրությունները վկայում են, որ Կոմմագենեի թագավորական տունը սերում է Երվանդունիներից, և որ Ք.ա. IV - III դդ. Կոմմագենեն Հայաստանի մաս է կազմել⁸⁸:

